Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1
S-77

y-5 ur5

ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵՆԱՑ

ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵՆԱՑ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ

Ի ՃԵՆԱՑ ԼԵԶՈՒԷ ՅԱՆԳՂԻԱՅԻ

ԵՒ ՓՈԽԵԱԼ Ի ՀԱՅ

Printed in Turkey

Երկրորդ տպագրութիւն

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1865 — ՌՅԺԴ

9310

372-42

785
40

Printed in Turkey

ՁԵԿՈՒՑՈՒՄՆ

ԶիմաստասէրՀ մատենիկս՝ զոր նախ Մարգար Շահրիմանեան ծանօթացոյց ազգիս թարգմանութեամբ և տպագրութեամբ, յետ իբր վաթսուն ամաց վերըստին թարգմանեալ 'ի նոյն յանդգնեսականէն՝ Գէորգոյ Աւետի Զաքարեան Ջուղայեցւոյ բնակելոյ 'ի Պաթաւիա ովկիանոսեան կղզեաց, և 'ի ձեռն մեր յերիւրեալ փոքր 'ի շատէ, իւրովք ծախուք ետ 'ի լոյս ընծայել, յամի 1845։ Իսկ այժմ 'ի սպառել առաջնոյն՝ կա-

մեցեալ մեր վերատին հրատարա-
կել, մուծաք զսա՛ն նոր և յան-
կարգոյն ձև վոքրատար, սուղ
ինչ ևս քերելով զառաջին շա-
բագրածն, և՛ ի մի բովանդակե-
լով զՊրանին Գ՝ որ յերկուս տրո-
հեալ էր։

ՊԱՏՃԷՆ ԹՂԹՈՅ

ԱՆԳԼԻԱՑԻՈՅ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ ԱՌ ԿՈՄՍՆ **

Ի ՓԵՔԻՆ, յ12 մայիսի, 1749

Ի վերջնում թղթիս՝ զոր շնորհս գտի ուղղել առ տէրութիւնդ 'ի 23 դեկտեմբերի 1748 ամին, զլխաւորեալ ըստ իմոյ ձեռին բաւականի ղնկարագիր աշխարհիս և զխոյզ.և խանդիր բնապատում տեղեկութեանց, կամք էին ինձ այնուհետև թղթովս և որ զհետ սորին՝ կարդել քեզ և ծանօթութիւնս զո-

ինաց, զքաղաքական կար-
գաց, զկրօնից և զբարուց
ազգիս ՃԵՆԱՑ. այլ ահա
զէպք ինչ անակնկալք 'ի
վեր երևեալ յաւուրս յայ-
տոսիկ, և զիմաստնոց ա-
րանց զուշ և զխելամտու-
թիւն յայն զրաւեալ, քան-
զի և բազում քննութեանց
և զրուցաց պատճառս տա-
լոց է իրդ ուսումնասիրացն,
ոչ ինչ ընդհատ սիրելի ա-
խորժակաց և քում տէրու-
թեանդ զիտելով իմ զայն,
փոյթ յանձին կալայ զրու-
ցել քեզ զայսմանէ։

Ա. ռ երի աշխարհիս ՃԵՆԱՑ
յարևմտից կողմանէ կայ
Թիպէթ երկիր մեծատարած,
զոր ոմանք Պարանթոլ կո-
չեն. և 'ի նմա է Լահսա գա-
ւառ, յորում բնակէ Լա-
մայն կամ քրմապետն դիցա-

պաշտից կողմանցս, որում
աստուածական իմն պատիւ
և շուք ընծայեն. և բաղում
մարդիկ 'ի շրջակայ ազգացն
լուեալ զմեծէ համբաւոյ ա-
ռաքինութեան վարուց նո-
րա՝ յորդորեալ զնան անդր
առաստաձեռն պարգևօք,
տալ նուէրս և ընդունել օր-
հնութիւն 'ի նմանէ։ Տեղի
բնակութեան նորա է հոյա-
կապ տաճար մեհենաձև կա-
ռուցեալ 'ի գլուխ լերին Պոմ-
թալայ. առ ստորոտով լե-
ռինն և 'ի համօրէն գաւա-
ռին Լահայ բնակեն պաշ-
տօնեայք Լամային զանա-
զանեալք կարգաւ և աշտի-
ճանաւ. բազմաց 'ի նոցանէ
նուիրեալ են մեհեանք, և
պատիւ մատուցանի նոցա
իբրև աստուածարեալոյ ո-
մանց։ Ի անդանօր բազմա-

թիւն քրմաց , որպէս երի-
ցանոյն Յիտալիա , և զպա-
րէն կենաց նոցա մատակա-
բարեն անպակաս տուրք ժո-
ղովրդեան , որք և 'ի հեռա-
ւոր աշխարհաց առաքեն նո-
ցա պատարագս . որպէս
յաշխարհէն Թաթարաց և
'ի Մողոլաց մեծաց , և դրեա
թէ 'ի համօրէն հնդկաստան
գաւառաց :

Լամայն մեծ 'ի պահս յոր-
ժամ ընդունիցի պաշտօն
յիւրոցն , ամբառնայ 'ի սե-
ղան շքեղաշուք զարդու զար-
դարեալ , և զոտս 'ի ներքոյ
առեալ բազմի 'ի գեղապա-
ճոյճ գահաւորակի , և երկբր-
պադուք նորա խոնարհական
ակնածութեամբ անկանին
առաջի նորա . իսկ նա և ոչ
երեսս անդամ մատուցանէ
նուաստութեան նոցին , և

ոչ խօսից արժանիս համա-
րի զնոսա, թէպէտ և տոհ-
միկ և թագաւորազուն որ
ի՝ցէ աղաչաւորն. բայց միայն
ձեռս 'ի վերայ գլխոց նոցա
եդեալ՝ յայտ ինն այնպէս
առնէ, եթէ թողեալ եղեն
նոցա մեղքն իւրեանց։ Եւ
ոչ այսմ ևեթ հաւատան մո-
լորեալքն, այլ և զծածուկս
սրտից իւրեանց համարին
նմա տեսանել. առ որ և ձե-
ռասուն աշակերտք նորա
թուով իբր երկերիւր ըն-
տիրք և պատուականք. քան
զամենայն լամայեցիս, զուն
զործեն անմահութեան կար-
ծիս ընծայեցուցանել զնման-
նէ առ ժողովուրդն, որպէս
թէ ըստ կամի փոխիցէ զբը-
նակարան մարմնոյն, և յայլ
փոխիցի մարմին, բնաւ ա-
մենևին 'ի կենաց ոչ անկա-
նելով։

Վաղնջուց կարծիք էին առ
իմաստունս Հունաց, եթէ 'ի
մեծի անդ մեհենեացն ամ-
բարեալ պահեալ կայցեն
մատեանք հինք 'ի գարուց
բազմաց. իսկ այժմու ինք-
նակալ աշխարհիս հեռա-
քնին հնաւանդ մատեանա-
գրութեանց՝ 'ի վերայ հասեալ
ճշմարտութեան իրացն, ջա-
նահնար եղև զբռամբ ածել
զայնոսիկ. վասն այնորիկ
խոյզ և խնդիր արարեալ
առն հնագիտի և լեզուագի-
տի որ կարիցէ զնախնեացն
վերծանել տառս, ընտրեաց
առ գործն կարևոր զմի ոմն
'ի Յանլիացւոցն կոչեցելոց,
որք են զերագոյն վարդա-
պետք ուսմանց, և անուն
նորա Բաւածու, այր իբրու
յինանմեայ տիոք, պատկա-
ռելի գնացիւք և ազնիւ կեր-

պարանոք, ճարտար 'ի գիր
և 'ի բան. որոյ հասեալ էր
ծանօթանալ ընդ իմաստնոյ
ումեմն լամայի բնակելոյ 'ի
Փեքին, և ուսեալ 'ի նմա-
նէ զլեզու Լամայեցւոյն թի-
պեթայ։ Ի վերայ բնաւորու-
և Ջանասէր ձրիոյ հանճարոյն
յաւելուլ ինն շնորհս նոր
կամեցեալ ինքնակալին՝ ա-
նուանեաց զնա Գոլաոյ, որ
է գերաստիճանպաշտօնեայ.
և հանդերձեալ զպէտս ու-
զևորութեանն արքայական
ճոխութեամբ, եւ 'ի ձեռս
նորա և բաղում՝ թանկագին
սպասս 'ի նուէր. քրմապե-
տին մեծի և աւագանւոյ նո-
րին, գրեալ և թուղթ իւրով
ձեռամբ, որ ունէր օրի-
նակ զայս.

ԱՌ ՄԵԾ ԵՐԵՍՓՈԽԱՆՆ ԱՍՏՈՒԾՈՑ

Եռամեծի և գերերջանիկ սեռաւն երկրպագութեամբ հանդերձ խնդալ.

«Մեք արքայ ճենաց և
» ինքնակալ ամենայն ինք-
» նակալաց երկրի, հրամայե-
» ցաք փառաւորելոյս առ
» ՚ի մէնջ Քաւածուայ գեր-
» ատուճան պաշտօնէի մա-
» տուցանել զփառարհական
» պաշտօնս մեր և զանձինս
» առ ոտս քումդ արքու-
» թեան. և խնդրել վասն
» մեր և մերոց մտերմաց
» և ամենայն ինքնակալու-
» թեանս՝ զհովանաւորու-

» թիւն ամենազօր և ամե-
» նախնամ շնորհաց օրհնու-
» թեան քոյ։

« Ցանկացողք զոլով և
» տենչասէր ընտիր ընտիր
» նախնեացն յիշատակարա-
» նաց, ամբարել 'ի նոցունց
» զիմաստս հանճարոյ ա-
» ռաջնոց գարուց, իբրև ի-
» մացեալ զիտացաք եթէ 'ի
» թանգարանս անդ նուի-
» րական նկուղիցն ձերոց
» ոչ սակաւք յայդպիսեաց
» վաղնջական վսեմ և պա-
» տուական մատենից գտա-
» նին, որ առ բազմաժամա-
» նակեայ հնութեան 'ի մո-
» ռացօնս անկեալ ժողո-
» վրդոյ, և խմաստնոյ ան-
» գամ արանց յանծանօթս
» մնան. մերովանն ջան 'ի
» կիր արկեալ զի մի բնա-
» ջինջ անյիշատակ լիցին

» պատուական մատեանքդ,
» պատշաճ համարեցաք ա-
» ռաքել առ սրբութիւն քո
» զայրս զայս յոգնահան-
» ճար և մեծապատիւ, զգե-
» ղագոյն պաշտօնատար զը-
» ղանս մերոյ՝ զՔաւաժու,
» որպէս զի եթէ և քում
» սրբութեանդ հաճոյթուեսա-
» ցի, հրաման տացես քըն-
» նել զգիրս նախնեացն, և
» հատու բանիցն լինել. վը-
» տահ զոլով մեր յառնդ
» բազմահմուտ մակացու-
» թիւն վաղեմի խօսից, զի
» բաւական է և 'ի թարգ-
» մանութիւն որոց միան-
» գամ և հանդիպեացի, թէ-
» պէտ և կարի հնագոյն ինչ
» մատեան դէպ լիցի գտա-
» նել »,

Ասատանոր չեն ինձ կամք

աշխատ առնել զքեզ յիշատակաւ երկարապատում ուղղութեանն, զոր և՝ ի տիպ արձանացոյց նոյն այր բազմապատիկ նորալուր ծանօթութեամբք, և ինձ թոյլ եւ զնոյն առնել թարգմանութեամբ՝ ի դարձին խմբում յԱնգղիա։ Արդ իբրև եհաս նա՝ ի նուիրական սահմանսն, փառացի տեսլեամբն և ճոխ պարգևօքն յաջողեցաւ ընդունելութիւն յօժարակամ գտանել՝ի Լամայէն մեծէ, որ և շնորհեաց նմա վանս առանձինն և սպասաւորս յիւրոց մանկանց, և իմաստուն զոք զքուրմ օգնել նմա՝ ի գիւտ խնդրելեացն. և զամիսս վեց մըտեալ խուզեալ նորա զդիւանս մեհենեացն՝ միխիթարեցաւ ոչ սակաւ զի եդիտ

մատեանս ընտիրս և վաղ-
միս։ Արար նա քաղուածս
'ի մատենից անտի՝ զորս յա-
կըն արկ, և հաւանական ծա-
նօթութիւնս զօրինակագրա-
ցըն, քննելով և ստուգե-
լով զժամանակն յորս ե-
կաց իւրաքանչիւր ոք 'ի նո-
ցանէ. և յայտնի ճանաչի
նա ոչ միայն ընթերցասէր
լինել այլ, այլ և ճարտա-
րամիտ և շատահանճար։

Հնագոյն 'ի մատենիցն զոր
եգիտ, մինչև ցայն վայր ան-
խմանալի և անթարգմանելի
կացեալ առ լամայեցիսն, է
մատեան փոքրիկ գրեալ 'ի
տառ և 'ի բարբառ նախնի
իմաստասէրաց աշխարհին՝
որ Թակմանքն կոչէին, և ու-
նի կանոնս բարոյականս.
բայց թէ ո՞ զայն գրեաց, և
կամ յորո՞ւմ ժամանակի՝ ոչ

է յայտ։ Զայս մատեան հա-
մօրէն փոխեաց նա 'ի ձե-
նաց բարբառ. այլ որպէս և
ինքնին խոստովանի, անհա-
ւասար յոյժ և յեռնեալ 'ի
վանմական և 'ի հզօր ձևոյ
խօսից բնագրին։ Տարաձայն
են կարծիք բանադատից և
քրմաց զմանէ. են որք զար-
մացեալք մեծապէս ընդ ի-
մաստութիւնբանից, Քոնֆ-
սէի տիեզերահռչակ իմաս-
տասիրի զայն ընծայեն,
և յետ ժամանակաց ասեն
թարգմանեալ 'ի լեզու թակ-
մանաց, և բնագրին անհետ
եղեալ. և են որք Լաւքունի
այլոց մեծանուն իմաստասի-
րի զսա ասեն լինել օրէնս և
կանոնս, այն որ ժամանա-
կակից եկաց Քոնֆսէի և
առաջնորդ եղև աղանդոյն
Թաւոյ. բայց և սոքա ոչ

ինչ ընդհատ յառաջնոցն տագնապս կրեն վասն լե-
զուին օտարութեան։ Բա-
զում ևս այնք են, որ զհետ
երթեալ զեղեցիկ իմաստից
գրոցն և այլոց նշանաց՝ հա-
մարին զայն յօրինեալ 'ի
Տանտամեայ Բրակմանէ, ո-
րոյ և թուղթն գրեալ առ
Ս.զեքսանդր աշխարհակալ
Յունաց՝ պատմի 'ի վէպս ա-
րևմտեայց։ Սոցին կարծեաց
միաբան երևի և ինքն Քա-
ւաածու, և թէ ոչ Տանտա-
մեայ՝ սակայն այլոյ ուրուք
բրակմանի գործ վարկանի.
.քանզի և տիպք բանից, ա-
սէ, զիմաստասիրացն այնո-
ցիկ ունին զոճ, և ոչ թարգ-
մանութեան երևին հետք։
Կալցի զայս որպէս որ և ա-
խորժէ. այլ երկբայութիւն է
առ իմաստուն՝ որպէս կան-

խեցի ասել՝ զգրոցս , քան-
զի աննման է ոճով արևե-
լեան ընթերցուածոց . որ-
պէս զի եթէ չէին 'ի նմա և
սեպհական դարձուածք ինչ
ասիականք , և հնութիւն լե-
զուին յորում գրեալն է ,
բազմաց աներկբայ թուէր
եւրոպացի ասել զմատենա-
գիրն :

Այլ ոչ և իցէ օրինակա-
գիր գրոցս , հակառակու-
թիւնն մեծ զոր կրէ նա առ
բանագէտս , և մեծափափագ
եռանդն ընթերցանելեաց
նորին 'ի քաղաքի աստ , և
միաբերանգովութիւնն , յոր-
դոր եղեն և ինձ ձեռն ար-
կանել և փոխել զայն յանգ-
ղիացի բան . մանաւանդ յոր-
ժամ զմտաւ ածէի ոչ անա-
խորժ ինչ նուէր լինել զայս
քում տէրութեանդ , թէ-

պէտ և ոչ սակաւ օտարա-
ցեալ լիցի թարգմանութիւ-
նքս այս 'ի բնագրէն. այն-
զի և ես 'ի ճենականէն փո-
խեմ զայս. այլ դէպք ինձ
'ի բարի յաջողեն, զի ոչ ոք
կարէ ընդ բնագրին զուգա-
կշիռ առնել զթարգմանու-
թիւնս զայս։ Միանգամայն
ակն ունիմ արդարանալ ա-
ռաջի գիտակացն վասն շա-
րագրածոյ թարգմանութեա-
նքս. քանզի թէպէտ և 'ի
սկզբանն իբրև ձեռն 'ի գործ
արկի՝ կամ էր ինձ աղատա-
բար ըստ վայելչութեան խօ-
սիլ լեզուիս մերոյ յերիւրել
զթարգմանութիւնս, այլ վան-
մական խմաստք և տատ-
ցուածք նախերդանացդ, հը-
զօր զօրութիւն բանիցն և
հակիրճ դարձուածք զրու-
ցացն՝ հարկ անհրաժեշտ 'ի

վերայ իմ ածին՝ ըստ կարի հեռևող լինել բնագրին. առ այս և օրինակ ինձ ունէի զթարգմանութիւնս գրոցն Յովբայ և Սաղմոսաց, և զՍողոմոնի գրոցն և ըզմարգարէից։

Բայց ես երանելի զանձն իմ վարկայց եթէ յաջողեցայ զուարճալի յարդարել զգործս զայս և հայթհայթել զբօսանս տէրութեան քում։

ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵՆԱՑ

ՆԱԽԵՐԳԱՆ

Խոնարհեցուցէք զգլուխս ձեր, բնակիչք երկրի. ափ՝ի բերան լերուք, և ընկալարուք զպատգամս՝ի վերուստ ահիւ և ակնածութեամբ։

Ընդ ամենայն տեղիս ուր արեգակն ծագիցէ, ուր հողմն շնչիցէ, ուր միանգամ գուցէ ունկն առ՝ի լսել և միտք առ խմանալ, օրէնք կենաց և բանք Աշխարհաստեղծութեան ելցին ընդունելի փառաւոր և մեծարանաւոր։

Ամենայնի Տէր է ապրիւր. նորա

է կարողութիւն և անքաւութիւն. խմաստութիւն մշանջենաւորակից է նմա, և գթութիւն նորա կայ մնայ յաւիտեան և հաւ:

Գահոյս արիւեալ բաղմի 'ի միջի տիեզերաց, և ոգի բերանոյ նորա կենդանացուցանէ զամենայն տրարածս:

Որ մերձենայ մատամբ յաստեղս, և ցնծութեամբ ընթանան 'ի շրջանս իւրեանց:

Որ շրջի յընդհանուր 'ի թեւս հողմոց, և ակնարկութեան կամաց նորա անսան ծագք երկրի:

Ի ձեռին նորա են կարգք և շնորհք և գեղեցկութիւն ամենայնի. ամենայն գործք նորա պատմեն զխմաստութիւն նորա. և խորհուրդ մարդկան ոչ բաւեաց լինել նոցին խելամուտ:

Իբրև անուրջք անէակք սահին զմտաք մարդոյ ստուերք գիտութեան. և իբրև ընդ խաւար տեսանէ և դատի, և ահա խաբեալ է:

Իսկ խմաստութիւն Տեառն պայ-

ծառ է որպէս զլոյս երկնից։ Տէր ոչ դատի մոռք, քանզի ինքն ապ-բիւր է ճշմարտութեան։

Արդարութիւն և գթութիւն կանառաջնորդեսցեն զոյնորա։ բարու-թիւն և սէր փայլեն 'ի դէմս նորա։

Ո՞վ է փառաւորեալ իբրև զՏէր կամ ո՞վ կարիցէ 'ի պայքար մտա-նել ընդ հզօրին։ և կամ ո՞ հաւա-սարիցի խմաստութեան նորա։

Նա ինքն ստեղծ զքեզ, ով մարդ։ հրամանաւ նորին վիճակե-ցաւ բաղդ քո 'ի վերայ երկրի։ տուրք են բարութեան նորա զօ-րութիւնք մտաց քոց։ և գեղեց-կայարմար շինուածք մարմնոյդ՝ գործ ճարտարութեան ձեռաց նորա է։

Արդ ունկն դիր ձայնի նորա, զի քաղցր է և բարեբար։ և եթէ միամտութեամբ պաշտիցես ըզ-կամս նորա, անձն քո հանգիցէ 'ի խաղաղութեան։

ՊՐԱԿ ԱՌԱՔԻՆ

ՊԱՐՏՔ ՄԱՐԴՈՅ ԱՌԱՆՁԻՆՆ



Ա

ԽԵԼԱՄՏՈՒԹԻՒՆ

Խորհրդաւոր էր յանձին քում, ով մարդ, քննեա և տես՝ վասն էր ստեղծարդ։ Ի միտ առ զկիսոյ զօրութեան քո, զպէտս և զպարտս քո, և ուղղեսցին 'ի բարութեան ամենայն ճանապարհք քո։

Մինչեւ քաջ կշռեալ զբանս քո մի խօսեսցես, և մի գործեսցես մինչեւ հեռատեսեալ զելս գործոց քոց։ զի զերծ լինիցես 'ի նախատանաց, և մի մոցէ ամօթ

ընդ յարկաւ քով, և մի անկցին երեսք քո 'ի թախիծս ոգոյ։

Այր անփոյթ և անմիտ՝ ոչ արկանէ սանձ լեզուի իւրում. բարբանջէ վայրապար, և յանմտութենէ բանից իւրոց կշռամբեալ յանդիմանի։

Որպէս որ երագընթաց վազս առնուցու զպատնշաւ և անկանի ցի 'ի խորխորատ զոր չէր տեսեալ յառաջագոյն, այսպէս և որ վաղվաղէ միջամուխ լինել 'ի դործ՝ և ոչ խորհիցի զեր նորին։

Արդ ունին մատոռ ձայնի խորհրդածութեան. քանզի բանք նորա բանք են ճշմարտութեան, և ճանապարհք նորա առաջնորդեն յանեղկեան ստուգութիւն։

Բ

ԶԱՓԱՀՈՐՈՒԹԻՆՆ

Ո՞վ ես դու է՛ մարդ, որ ապաւինիս յիմաստութիւն քո. կամ զի՞ պարծիս ընդ գիտութիւն քո։

Սկիզբն գիտութեան՝ ճանաչել զոգիտութիւն անձին. և եթէ կամիս ազնիւ և պատուական երևել յաչս այլոց, թող անդր 'ի բաց զյիմարութիւնդ իմաստուն երևելոյ անձին քումմ։

Որպէս զգեաւ անպատճոյճ զարդ է վայելուչ կնոջ գեղեցկի, և չափաւորութիւն կենաց՝ չքնաղագեղ զարդ է իմաստութեան։

Բանք առն հմտեսի պայծառագոյն կացուցանեն զճշմարտութիւն. և խոստովանութիւն երկմտութեան՝ քաւէ զթերութիւն գիտութեան։

Զէ՞ նա յանձնապաստան 'ի գիտութիւն իւր. մտախորհ լինի 'ի

վերայ խրատուց բարեկամին, և յանձն ձգէ զօգուտս նոցին։

Գովեստ եթէ լսիցէ, 'ի բաց դարձուցանէ զունկն իւր, և ոչ կամի հաւատս ընծայել. և ինքն յեռին է 'ի Ճանաչողս ուղղութեանց իւրոց։

Այլ երբեմն քօղ զի յաւելու զշնորհս գեղոյ, այսպէս և առաքինութիւնք նորա գեղեցիկք ևս ցուցանին ընդ սուտերաւ պարկեշտութեան։

Տես զյանձնապատանն և զընդնապարծ, և 'ի միտ առ զչափ ամբարտաւանութեան նորա. պատմուճանս սեթևեթեալս արկանէ զանձամբ, ճեմի 'ի հրապարակս, և զաչսն յայսկոյս և յայն բաժանեալ շրջէրկէ, ամենեցուն կամի յանին անկանել։

Կոկոզավիզ 'ի վեր տանի զգլուխ իւր և չառնս լինի տնանկին. դուռզութեամբ ունքսյ ընդ խոնարհս. և 'ի վերոյ ծաղր և ծանակ լինի, և խոչ ընդ ակն ամենեցուն՝ վասն անմտութեան և անարիութեան իւրոյ։

Զխորհուրդս այլոց մերժէ արհամարհանօք. վատահ է՝ի կարծիս մտաց իւրոց, և ամօթով կորացի։

Ի ցնորս մտաւոր իւրոց խորհրդոց փքացեալ պարծի. պարարապու�մն և զբօսանք իւր են զօրն ողջոյն Հաւ արկեալ խօսել զանձնէ։

Ընդէր որպէս ծարաւի յաղբերաց շողոմուլթեան հնթողաց իւրոց, մինչև՝ի նոցին իսկ՝ի մարդեղուզացն խարդաւանեալ լքցի։

Գ

ԳՈՐԾԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Քանզի անդարձականք են աւուրքն անցեալք, և հանդերձեալքն լթերևս վրիպեսցին՝ի քէնարդ հետ արա քեզ, այր դու, վարել ժամանակաւս որ կայ. անտրտունջ գոլ ընդ կորուստ

անցեալոյն և մի յապաղայն մեծայոյս։

Ի քո ձեռս է վայրկեանս այս. իսկ վաղիւն կայ յարդանդի հանդերձելոց, և ոչ գիտես որպիսի ինչ ծնանիցի։

Զոր եդիր 'ի մտի գործել՝ գործեա վաղվաղակի. և զոր կարես վճարել յառաւօտու, մի յապաղես մինչև 'ի մուտս արեգական։

Տառապանք և տուայտանք են ծնունդք ծուլութեան. իսկ վաստակք առաքինութեամբ հանդերձ՝ ածեն զխնդութիւն։

Ձեռք գործօնք բառնան զկարօտութիւն. բարօրութիւն և յաջողութիւն կենաց՝ մասն են վիճակի առն աշխատասէրի։

Ո՞վ է դա որ լցեալ է մեծութեամբ, և ամբարձեալ 'ի բարձ աւագութեան. որ արկանէ զիւրն հանդերձ փառաց և շքոյ, որոյ հուչակ համբաւոյն ընթանայ ընդ քաղաքս, և որ 'ի խորհրդարանս թագաւորաց՝ առա-

ջիկայ գտանել։ Նա է որ արդեալ զծուլութիւն 'ի մոռանելոյ 'ի տուն իւր. և ցպղերգութիւն ա-սաց. Ոխերիմ թշնամի իմ էս դու։

Որ կանխայարոյց լինի ընդ առա-ւօտս, և ենջէ յանագանի. որ կրթէ զմիտս իւր խորհրդածու-թեամբ, և զմարմին իւր երկոսք վաստակոց, և զերկոսին յազդոջ պահէ։

Բեռն է անձին այր հեղգ. պահք նորա ծանրադանդաղք են յանցանել. և ասանդական դէ-դերի թէ ուրեմն ժամավաճառ լեցի։

Իբրև զհովանի ամպոյ սահեալ վարին աւուրք նորա, զորոյ իբրև անցանիցէ՝ ոչ գոյ գտանել ըզ-հետս կամ զյիշատակ։

Անձն նորա վարակեալ է ախ-տիւք. կամի ինն գործել, և ձեռք իւր ոչ շարժին. 'ի խաւարի ոգի-տութեան դանդաչեն միտք նո-րա, և խորհուրդք նորա շփո-թեալք են. յօժարակոյթ փա-

փադէ Թեւակոխել յիմնատու-
Թիւն, այլ ոչ գիտէ ուրպէս պա-
ատասխանի. ցանկայ նշոյ ուսել,
և չկամի աշխատել և զկորձ նո-
ին բեկանել։

Թափուր է տուն նորա յամե-
նայն բարեզարդութենէ. ծա-
ռայք նորա շռայլեն և կազեն, և
ինքն 'ի կորուստ ընթանայ. տե-
սանէ աչօք իւրովք և լսէ ականջօք
զվատնումն ընչից իւրոց. ըզ-
գլուխ իւր շարժէ, ըղձակերտ
լինի ուղղել զամենայն բարիոք
կարգաւ, այլ կամք նորա չեն
կամք հաստատունք. մինչև վը-
տանգք և կորուստ ապառասպուա-
հասցեն 'ի վերայ նորա իբրև ըզ-
մրրիկ փոթորկեալ, և ապաշա-
ւանօք ինչցէ 'ի դժոխս։

Դ

ՆԱԽԱՆՁԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Եթէ փառաց ցցէ ծարաւի անձն քո և քաղցր են յականջս քո նուագք գովութեան, ամբարձ զանձն քո 'ի հողոյ այսի յորմէ ստեղծեալդ ես և ուղղեա զքեզ 'ի բարձունս՝ առ ինչ մի արժանի գովութեան։

Կանխիդ այդ երկնաբերձ՝ սերմն փոքրիկ էր երբեմն ամփոփեալ 'ի սիրտ երկրի։

Յոր պայման կենաց և վիճակեցար՝ մի՛ա գիր առաջին լինել 'ի նմին, և մի՛ ումեք թողուցուս գեր 'ի վերոյ անցանել զքեզ 'ի բարեբարութեան. մի՛ արկաներ նախանձ ընդ յաջողութիւն այլոց, և յօժարագոյն 'ի գործ արկցես զքնաւոր քո ձիրս։

Մի՛ ցանկար նկուն առնել զհակառակորդ քո վատութեամբ.

այլ բարեբաւութեամբ եւեթ ջանա գլեալ զնովաւ. որպէս զի եթէ եւ ոչ յաջողեսցի քեզ զանցանել զնովաւ՝ փառաւորեսցին եւ գովեսցին ջանք քո։

Ճիգն ուղղութեանց վերամբարձեալ զհոգիմարդոյ յանձին իւրում. անձուկ մեծ է նմա ժառանգել համբաւ բարի, որպէս երիվար յոխորտ որ խնդութեամբ ընթանայ յորս եւ յասպարէզ։

Բարձրանայ նա որպէս զարմաւէնի դիմակալ բռնութեան հողմոյ, եւ եթէ զարծուի սլացեալ 'ի բարձրութիւնս երկնից ճախրէ, եւ 'ի պայծառութիւն արեգական անկենկառոյց լեալ պրծնու։

Ի գիշերի յերազանայ եւ տեսանէ զարս անուանիս յուղղութեան. եւ 'ի տուէ ցանկալի է նմա ընդ հեաս նոցա գնալ։

Երկնէ 'ի մոի խորհուրդս մեծամեծս, եւ ցնծայ 'ի կատարման նոցին. համբաւ նորա ընթանայ 'ի ծագաց մինչեւ 'ի ծագս աշխարհի։

Բայց սիրտ ասն նախանձաբեկ կի լցեալ է լեզուավ գառնութեան. լեզու նորա մխեալ է 'ի թոյն. յաչառութիւնք ընկերին խռովեն զնա։

Ցասի յանկիւնս ասն իւրոյ տրտմեալ և նեղեալ. բարութիւնք այլոց՝ չարիք են նմա։

Ոխ և չարակամութիւն բուն նեալ են 'ի սիրտ նորա, և չիք նմա տեսանել զանդորր խաղաղութիւն։

Խոնարհեցուցանել նկրտի զամենեսին ոչք բարձրանայցեն քան զանձն իւր. և զամենայն գործս նոցա ընդ խոտորնակ միտս ասնիւ ասելի եղեալ հալածի 'ի մարդկանէ. և որպէս զսարդ յոտսայն իւր վարակեալ կծկի։

Ե

ԽՈՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Լուր ձայնի զգօնութիւն. ունկն դիր խրատուց նորա, և գանձեա զնոսա 'ի սրտի քում. զի յօրէնս նորա հաստատեալ է ամենայն. նովաւ կան ամենայն առաքինութիւնք, և նովաւ ուղղին կեանք մարդոյ։

Արկ սանձ լեզուի քում և դիր պահապան շրթանց քոց, զի մի խռովեսցի անձն քո 'ի բանից քոց։

Որ այպնակատակ լինի կաղին, զգոյշ լինիցի գուցէ և ինքն կաղայցէ։ Որ վաղվաղէ խօսել զթերութեանց այլոց, լուիցէ և զիւրոցն՝ նախատանօք հանդերձ։

Ի շատխօսութենէ ծնանի ապաշաւ. լռութիւն աներկիւղ կայ։

Շաղակրատն գառնութիւն է

ակմբելոց։ 'ի շաղփարվանաց նորա տաղտկան լսելիք, և 'ի յորդորելենէ բանիցն հեռախաղաղ ընկալցին զզուցատրութիւնք։

Մի գովեր զանձն քո, զի ամօթ և աստելութիւն անկանին 'ի վերայ քո։ և մի զոք առնիցես ծաղր, զի մի զանձն քո 'ի վատանգ արկանիցես։

Լեղի է բարեկամութեան՝ ծաղր երգիծանաց։ և որ ոչ արկանէ դուռն բերանոյ իւրում՝ հանապազ 'ի տագնապի կացցէ։

Կաշ վան քո զկարևորն և զքաջագէպ քումդ վնճակի, և մի վատնես որ ինչ և 'ի ձեռն անկանիցի քո։ որպէս զի մխիթարեսցիս 'ի ծերութեան քում 'ի վերայ մթերիցն զոր ամբարեցեր 'ի մանկութեան։

Ագահութիւն ծնող է չարեաց, իսկ չափաւորութիւն՝ քաջ հոգաբարձու և ուտիկան լինի ուղղութեանց։

Մի լինիր ձեռնամուխ յոր ինչ ոչ անկանի քեզ։ թող պաշտօնէիցն զինամս պետութեան։

Մի բազում ծախս առներ վասն զբօսանաց, զի մի առաւել տուժեսցիս 'ի գինան քան բերկրեսցիս 'ի վայելման։

Մի տար բարօրութեան փակել զաչս արթնութեան քո, և մի լիութեան՝ ըզձեռս ժուժկալութեան կարձել։ Յղփացելոյն լիութեամբ բարեաց կենցաղոյս՝ հասցեն ամք յորս ողբասցէ զաղէտս չքաւորութեան։

Մինչև փորձեալ՝ մի ումեք հաւատար, և մի առ 'ի կարծ թերահաւատիցիս յումեքէ. քանզի և այդ ոչ է սիրոյ գործ։

Իսկ եթէ 'ի վերայ հասեր բարեպաշտութեան ուրուք, ժողովեա զնա 'ի սիրտ քո իբրև զդանձ անգին, և եղիցի նա քեզ իբրև զակն պատուական։

Ի վարձկանէ մի ընդունիր շընորհս, և մի ընկերանար չարին. զի մի գայթակղութիւն ածցեն ուղղութեան քոյ, և վիշտ հոգւոյ քում։

Մի լինիր վաղվաղ 'ի ծախել

ինչ՝ որում յեռոյ կարօտ լինիցիս։ և մի դիմադրաւ 'ի վտանգ, յորմէ մարթ է զգուշանալ նախատեսութեամբ կամ ելն աղագս գտանել։

Ուսիր խնայանանալ 'ի փորձոյ այլոց, և 'ի վրիպանաց նոցին ուղղեացես զսխալանս քո։

Մի և 'ի զգօնութեան քում ակն ունիցիս անվրէպ յաջողութեան։ քանզի ոչ գիտէ ոք՝ զինչ ծնանիցի գիշերն։

Ոչ միշտ տարաբաղդիկ լինի անմիտն, և ոչ խնայասուն հանապազօր բարեբաղդ։ սակայն յիմար ոչ վայելս գտցէ անթերիս 'ի կեանս իւր, և ոչ զգօն մինչև 'ի վախճան մնաց ցակամեալ։

Զ

ԱՐԻՈԻԹԻՆ

Փորձանք և արկածք, տառապանք և տուայտութիւն, այս բաժին է ամենայն մարդոյ որ գայ յաշխարհս։

Յառաջագոյն պատրաստեա զանձն քո արիապէս. որպէս զի կարող լինիցիս անցողդողդ տանել վշտացն՝ որ գալոց են 'ի վերայ քո։

Որպէս ուղղ զի համբերութիւն տոկայ տապոյ և սովոյ և ծարաւոյ, և անխոնջ հատանէ անցանել ընդ անապատս աւազուտս, այսպէս այր քաջասիրտ անվրդովելի պահէ զառաքինութիւն իւր յամենայն դէպս վտանգաց։

Աղնուական և վեհ հոգւով ծաղր առնէ զջարանենդ հնարիւք բաղդին. ոչ երբէք վհատեալ լքանի մեծանձն ոգի։

Երանութիւն նորա ոչ է 'ի պարգևս բաղդին ապաստան. վասն այնորիկ և ոչ զանգիտէ 'ի խէթի հայել նորա :

Իբրև լեառն վիմեղէն զետեղեալ 'ի ծովու՝ անդրդուելի կայ 'ի կուտել 'ի բաղխել ալեացն :

Եւ որպէս զբերդ ամուր կառուցեալ 'ի վերայ լերին՝ 'ի վեր տանի զգլուխ իւր. առ ոտս նորա անկեալ դնին նեռք բաղդին :

Ի տագնապ ժամուն խրախոյս մատուցանէ նմա արիութիւն իւր. և հաստատութիւն մտացն 'ի թիկունս հատանէ նմա :

Իբրև զնահատակ դիմագրաւ 'ի ճակատամարտ՝ արձանանայ ընդդէմ արկածից կենաց, և բարձեալ զյաղթութիւն պսակն դարձ տանէ :

Անդորրութեամբ հոգւոյ թեթևաբեռն առնէ զամենայն ծանրութիւն թշուառութեան. և զամենայն ինչ նուաճէ երկայնամիտ ժուժկալութեամբ :

Այլ վատ և հոգի կարճամիտ՝

անձնամնան լինի յամօթ և 'ի նախատինս,

Զահի հարեալ յերեսաց մնան կուրթեան՝ ոչ խղճէ 'ի նուաստութիւն կործանիլ. և մեղմեն խորհրդովք ձգէ յանձն իւր զանիրաւութիւն:

Որպէս շարժի եղէգն 'ի մեղմոյ օդոյ, այսպէս տատանեալ գողայ անձն նորա 'ի ստուերաց անգամ վշտաց:

Ի հատանել վտանգաց՝ տագնապեալ ձեռնթափ լինի, և յաւուր նեղութեան անկանի 'ի զօրութենէ. յուսահատութեամբ լքանի անձն նորա ընկճեալ:

Ի

ԲԱՒԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Յիշեա, ով մարդ, զի իմաստութիւն Բարձրելոյն եւ քեզ 'ի վերայ երկրի զայդ վիճակ, որ ճանաչէն զսիրտ քո, և քննէ զունայ-

նութիւն ըղձից քոց, և բաղում՝ այն է զի առ առաւել գթոյն ապախտ առնէ զհայցուածոյք քոյք։

Սակայն բարեխնամ տեսչութեամբն չառնէ անման յերկնային կութենէ զերաւացի բաղձանս և զՃիգն անսագիւտ։

Հայեաց և տես ուստի բղխեն վիշտքն ընդ որ զբարիս, և անյաջողութիւնք՝ վասն որոց գանգատիս. ոչ ապաքէն 'ի յիմարութենէ, 'ի անապարծ խորհրդոց, 'ի վայրապար ըղձից կամաց։

Եւ արդ մի տրտունջ լինիր զվերին տեսչութենէն, այլ զսիրտ քո փութասջիր ուղղել. մի ասիցես, թէ էր ինձ մեծութիւն կամ իշխանութիւն կամ դէպ ժամանակ՝ բարեբաստիկ լինէի. քանզի և որ յաջողսիկն վայելեն՝ չեն զերծ 'ի հոգոց և յանձկութենէ որ անմեկնելի կան յայնցանէ։

Տնանկ ոչ զգայ զծուփ և զանդոհ սրտի մեծատան. ոչ գիտէ զանձկութիւն և զտառապանս

իշխանութեան, չիմանայ զձանձրոյթ պարապոյ 'ի վաստակոց, և ոչ զանձն իւր նեղէ և քանքարոտայ ընդ պայման կենաց իւրոց։

Մի ընդ ոմեք նախանձիր երանութիւն, զի ոչ գիտես զաղէտս գալանեաց սրտի նորա։

Բաւականանալ փոքրուն՝ խնայութիւն մեծ է. խակ որ յաւելու զգանձս՝ ընդ նմին ժողովէ և զհոգս. սիրտ գոհ՝ գանձ ծածկեալ, և անվորձ 'ի վշտաց։

Ոչ ինչ օգնեացեն մեթեզք ընչից երջանիկ առնել զքեզ, յորժամ գրգանք և հրապոյրք յաչսակ բաղդի կապտեն 'ի քէն զարդարութիւն և զինդամութիւն. զգութ կարեկցութեան և զպարկեշտութիւն։

Արդ զայս գիտելով ծանիր զի անխաւն և անապակ երանութեան բաժակ՝ ոչ է արբուն մարդոյ մահացուի։

Քանզի յասպարիզն առաքինութեաց կարգեաց զմարդ տեսչութիւնն վերին, զերջանկութիւն

նպատակ դիտման ընթացքին կարդեալ, ոչ է ումեք տուեալ ժամանել առ այն՝ մինչև զընթացսն կատարեալ, և ապա առցէ զյաղթութեանն պսակ 'ի յաւիտենից կայանն։

Ը

ԺՈՒԺԿԱԼՈՒԹԻՆ

Առողջութիւն, խմաստութիւն և անդորրութիւն ոգւոյ, պարգևք երկնաւորք, այսոքիկ են որ մօտագոյնս առ երանութիւն կացուցանեն զմարդ 'ի կենցաղումս։

Եթէ զայդոսիկ ստացար և կամիցիս պահել քեզ մինչև յաղթութիւն ծերութեան, 'ի բաց արա 'ի քէն զհրապոյրս հեշտութեան, և 'ի տագրանաց նորա փախիր։

Եւ յորժամ զփափկութիւն և զդրդանս իւր սիրեցէ նա 'ի լիութեանն սեղանոյ, յորժամ գինեն նորա

փրփրացեալ՝ի բաժակի պղպջակս
՝ի վերս արձակիցէ, յորժամ քաղցր
դիմօք և զուարթագին աչօք հայի-
ցի՝ի քեզ և յորդոր մատուցանիցէ
խնդամիտ սրտիւ վայելել՝ի բա-
րեկենդանութեան. ահա հա-
սեալ է քեզ փորձութիւն ժամ.
վասն որոյ զգոյշ կաց և մի՛ տար
դրդուել զգասութեան քում
՝ի պահպանութենէ։

Քանզի ցանկալի ցանկալի հե-
շտութիւնքն զոր խոստանայ քեզ՝
փոխեսցին յախտս մոլեկանս.
վայելք նորա երագեն՝ի սխա-
լանս պէսպէս և՝ի վախճան կե-
նաց ընթանան հանապազ։

Հայեաց շուրջ զքեւ և տես զբազ-
մականս կոչնոց նորա. և՝ի դի-
մացն բերկրեցելոց ծանիցես զոր-
սացեալսն առ՝ի նմանէ ստապա-
տիր թելադրութեամբքն։

Տես քանի՛ հիւծեալ և մաշեալ
ես մարմնով. հիւանդագին կենօք
և վեհերոտ անձամբք տաղտա-
պեալք նեղին։

Ծանրատատակուկ աւուրք վաշ-

տաց և ժամանակ տուայտու-
թեան գան զկնի վաղանցուկ
հրճուանաց զեղխութեան, խան-
գարեալ և պակասեալ է 'ի նոցա-
նէ քաղց և փափագ կերակրոյ.
խահամոքք անուշահամք չեն բա-
ւական այնուհետև ախորժակս
արծարծել 'ի նմա։

Քանզի անձամբ զանձինս զգայա-
զնրկս արարին, իրաւամբք ժա-
ռանգեսցեն ըզպատուհաս՝ զոր
հաստատեաց Բարձրեալն 'ի բնու-
թեան արարածական պարգևացն
'ի կշռամբառնս այնոցիկ որոց չա-
ղարաչար վարեցին նոքօք։

Իսկ ո՞վ է դա որ զուարթագին
երեսօք և շնորհագեղ ընթացիւք
անցեալ Ճեմի յայն կողմն դաշ-
տին։

Վարդք երկնագոյնք ծիծաղին
'ի դէմս նորա. բուրումն անու-
շից առաւօտին ծաւալի 'ի շրթանց
նորին. բերկրութիւն անմեղու-
թեամբ ամոքեալ յաչս նորա
փայլ արձակէ, և 'ի հրճուալից
սրտէն՝ քաղցրաձայնութիւն եր-

գոց հնչէ 'ի վերս մինչ յուշիկ գնա-
ցիւքն ՀԵՄ առեալ շրջի :

Առողջութիւն անուն է նորա ,
և դուստր է ժրութեան զոր
ծնաւ 'ի բարեխառնութենէ . որ-
դիք նոցա բնակեալ են յայն կող-
մին հիւսիսական լերանց Սան-
տոննեայ :

Զաւակք արիականք են և
ժրագլուխք և կայտառք . ամե-
նեքին վայելչութեամբ և առաքի-
նութեամբք զարդարեալ , որպէս
և քորք նոցա :

Պարապմունք հօրն իւրեանց զար-
թուցանեն զախորժակս նոցին , և
մօրն պարէն կազդուրէ զնոսա :

Խնդութիւն մեծ է նոցա մար-
տընչեալ ընդ ախտական կրից , և
փառք նոցին՝ յաղթեալ սովորելոց
չարեաց :

Զաւիսաւ և կարգաւ են վայելք
նոցա , վասն այնորիկ և տոկունք .
ոչ յերկարանան 'ի քուն , այլ
ննջեն քաղցր և անվրդով :

Անարատ է արիւն նոցա , և
միտք անխռովք . զՀանապարհ

սեմոց տանց նոցին ոչ գիտաց բը-
ժիշկ :

Ազատութիւն ոչ եղև բնակա-
կից որդւոց մարդկան . և ոչ է-
բաց 'ի մուտս բնակութեան նոցա
աներկեւանն անդորրութիւն :

Արտաքուստ գիմագրաւեալ
գնան 'ի նորանոր վտանգս , և 'ի
ներքոյ է ոտիս դարանակալ որ
մատնէ զնոսա :

Քաջութիւն , զօրութիւն ,
դեղ և ժրութիւն՝ արկանեն խղճ
ցանկութեան 'ի սիրտ մոլեգին
սիրոյ :

Եւ յարուցեալ կանգնի ընդ
սաղարթազուարճ հովանոցաւ
խրոյ . փաղաքշանօք առ ինքն
ձգէ զաչս նոցա , և տարածանէ
զթակարդս փորձութեանց :

Գիրգ և փափուկ է մարմնով ,
և փարելի տեսլեամբ . հանդերձք
նորա պչրանօք փերևեռեալ .
աչք նորա պագշտութեան բարբա-
ռին 'ի գիրկս իւր դարանեալ նստի
հրապոյր նենգաւոր . մատամբ
նշանացի առ ինքն կարդայ , գե-

զով երեսացն ընդունէ զնոսա 'ի սէր իւր, և համոզիցէր քաղցրաբանութեամբ լեզուին նկրտի արկանել զնոսա յորոգայթ։

Փախիր փախիր 'ի քաղցրաբան բերանոյ, և մի տար զլսելիս քո 'ի հրապոյրս զմայլական ձայնի նորա։ Եթէ հարան աչք քո 'ի սիրակաթ աչս նորա, եթէ լուար հեշտալուր ձայնին, եթէ գիրկըս արկեալ փարեցաւ զքեզ, ապա պարտաւանդեալ անդէրծ պահեսցէ զքեզ 'ի կապանս իւր։

Ամօթ և անարգանք 'ի վերայ հասցեն. հիւանդութիւն և տընանկութիւն, տառապանք և տըրջանք մի դանդաղեսցեն։

Ուժաթափ լեալ 'ի տուիանաց, յափրացեալ 'ի գրգասէր խանդաղատանաց, մեղկութեամբ և հեղգութեամբ տուայտեալ, զօրութիւն և քաջողջութիւն պակասեսցին 'ի քէն, և եղծցի վայելչայարմար շինուած մարմնոյդ, ստկաւաւոր լիցին ամք կենաց քոց, և շինչեալ տիտաւ աւուրք քո։

բազում՝ եղեցին վերջոք ցաւոց քոց, և ոչ ոք լինիցի քեզ կարեկից։

Բայց որք կեանն չափաւոր ժուժկալութեամբ, առուգութիւն ամենեցեր զՋելս նոցա. ոյժ կորովոյ յոսկերս նոցա բնակիցէ, և 'ի գործս վաստակոյ պարապեալ զբօսնուցուն զօր հանապազ։

ՊՐԱԿ ԵՐԿՐՈՐԴ

ԿԻՐՔ



Ա.

ՑՈՅՍ ԵՒ ԵՐԿԻՒՂ

Քաղցր են խոստմունք յուսոյ քան զվարդ դեռաբուսիկ, և բուրն հրապոյրք ակնկալութեան։ Բայց ապառնալիք երկիւղն ահընկէց լեալ պակուցանեն զսիրտ։

Այլ դու զգոյշ կաց, մի՛ ի խաբս յուսոյ ըմբռնիս, և մի՛ յահէ սրտաբեկ լինիցիս. այլ ժրացիր կատարել զյառաջեղեալ բարին և զուղիղն, որպէս զի անխռով սրտիւ՝ ի դիմի հարցիս յաջողակացն և անյաջող արկածից։

Զայր բարի ոչ զարհուրեցու-
ցանէ երկիւղ մահու. դարձ՛ ըզ-
ձեռս քո յանիրաւութենէ, և ոչ
անկցի ահ 'ի վերայ հոգւոյ քո։

Յամենայն դէպս ձախողու-
թեանց՝ քաջալերեա զանձն քո
արդար ակնկալութեամբ, և մի՛
թուլանար. քանզի ոչ ինչ յա-
ջողեսցէ առն յուսահատի։

Մի՛ խառնվեր զհոգի քո վայրա-
պար տագնապաւ, և մի՛ տացես
խօլական ցնորից տառապեցու-
ցանել զսիրտ քո։

Արիածս վտանգաց ծնանի եր-
կիւղ. իսկ որ բարեյոյսն է՝ ան-
ձամբ անձին օգնական լինի։

Որպէս Ջայլամն հալածեալ զի
զգլուխ իւր թաքուցանէ, և նշա-
ւակ կայ 'ի յետոյ, այսպէս և
երկչոտին խառվեք 'ի վտանգս մաս-
նեն զնա։

Յոր ինչ անձեռնհաս համարի-
ցիս զանձն քո, անհնարին զայն
կացուցանէ քեզ անյուսութիւն.
բայց որ համբերէ մինչ 'ի վախ-
ճան, յաղթող գտցի ամենայն
արիածից։

Յոյս անուսի պատրեալ ընդունէ զսիրտ անմտին. բայց որ խնամառուն է՝ ոչ ընծայէ հաւատս և ոչ ընդունայ զհետ նորին։

Յամենայն իրաւս փափագանաց քոց՝ բանն լեցի քեզ առաջնորդ և մի քան զկարծիս հնարաւորութեան անդր ձկտեցուցանես զակընկալութիւն. որպէս զի յաջողեսցի քեզ յոր ինչ և ձեռն արկցես, և յանցաջողութեան էլից՝ կացցես մնասցես անսասան։

Բ

ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՐՏՄՈՒԹԻՒՆ

Մի տար թոյլ խնդութեան տարապայման սաստկութեամբ յիմարեցուցանել զմիտս քո. և մի տրտմութեամբ և ծանրաթախիծ անձկութեամբ խաւար սրբատաթափ առնել զքեզ։

Զդոյզն ինչ ձիրս շնորհացն զոր մատուցանէ քեզ աշխարհ, գի-

տէ այնպէս բերկրատես երևե-
ցուցանել, և զնուն մի չարեացն
այնպէս դժուարակիր՝ մինչև դեր-
դուեցուցանել զքեզ 'ի զուգա-
կշիռ չափաւորութենէ :

Տես անտանօր զսուն զբօսա-
նաց՝ գեղայօրէն զարդարեալ ար-
տաքուստ երևելի տեսլեամբ. և
'ի ձայնից իսկ բերկրութեանց
ծանիցես զայն :

Ա. դրան նորին կանգնեալ հո-
մանուոյն 'ի ձայն բարձր կարդաց
զամենեսին ոչք ընդ այն անցանի-
ցեն. ցուցս առեալ գեղգեղէ, ծա-
փերս հարկանէ, 'ի ծաղր հատանի :

Հրաւիրանաւ կոչէ զնոսա գալ
'ի վայելս գրդանաց կենցաղոյս,
ոչք ընդ հովանեաւ իմոցս ևեթ
ասէ յարկաց գտանին :

Այլ գու մի մոցես ընդ դրունս
նորա, և մի լինիցես զոսկոլ որոց
յաճախեն առնա :

Ոչք զանձինս մանկունս խըն-
դութեան կոչեն, ծաղր է 'ի շըր-
թունս նոցա, և զուարթութիւն
'ի դէմս. այլ մոլութիւն և շամբ-

շութիւն յամենայն 'ի գործս նո-
ցա ։

Ոյք սերտիւ կապեալ ընդ ի-
րեարս և ձեռն 'ի ձեռն ձգեալ
գթեն 'ի չարիս , վասնզք պարա-
ւանդեալ կան զնոքօք , և ան-
դունդք կորստեան 'ի նեղքոյ ո-
ստից նոցա բացեալ սպասեն ։

Հայեաց արդ և տես յայն կող-
մըն , ուր հովիտն վարագուրեալ
'ի մենոց հովանաւորաց , որք
ծածկեն զառուն ոգոյ յաչաց
մարդկան ։

Ինքն 'ի միջի սիրտ 'ի բերան
յոգւոց հանէ խորին հառաչա-
նօք . սիրէ զբնականալն ընդ թը-
շուառս և ընդ նեղեալս երկրի ։

Ամենեքին ունի յուշոյ մտացն
զամենայն ազէտս կենաց և ոչ-
բայ անդադար . զալիալիուն և
չարակամ բարք մարդոյ՝ անլուռ-
ել գլուխք են ձառից 'ի շրթունս
նորա ։

Չարիս ևեթ ծնանին առ նա
արարածական բնութիւնք հա-
մօրէն . և զամենայն յոր ակն ար-

կանէ՝ նկարեալ կարծէ թաղծութիւն մտացն իւրոց. ձայն քրիստոնէական ընկալանաց տխրեցուցանէ զբնակութիւն նորա զտիւ և զգիշեր։

Մի՛ հուսալ լինիր 'ի տաղաւարս անդր, զի լի է դառնութեամբ թունից. շուն նորա ապականէ զպտուղս, և ցամաքեցուցանէ զծաղկունս որք անուշահոտ և պայծառադէզ գործեն զպարտէզ կենաց։

Հեռացեալ 'ի տանէ ծաղուն՝ զգոյշ լեր ոտից քոց չխոտորել ընդ ճանապարհս սուրբ օրենանին. այլ խնդրեա խնամով ընդ միջինն հետեւել պողոտայ, որ հանեալ ընդ հեշտին վերելս կառուցէ զքեզ 'ի խարսխի բաւականութեան։

Ընդ սմա բնակէ անդորրութիւն կենաց, ընդ սմա աղաղութիւն և դիւրութիւն. խնդամիտ է, այլ ոչ ոտոտի պաճուճանաց զհետ երթեալ. անծաղրածու, այլ բարեհամբոյր. անխռով և անայլայլակ 'ի վերս և 'ի հրաշուանս կենցաղոյս։

Աստուած իբրև 'ի բարձր գի-
տանոցէ եկեալ քննեսցէ զանմը-
տութիւն և զհիգութիւն այնո-
ցիկ, որք ըստ մարմնոյ ցան-
կութեան սրտից իւրեանց՝ հան-
գանակեն 'ի զեղխութիւն ընդ ըն-
կերս ուրախամիտս. կամ թէ
գեղեալք 'ի հոգոց և յանձկու-
թենէ սրտի, մաշեն զամենայն ա-
ւուրս կենաց իւրեանց 'ի սուգ՝
ընդ աղէտս և ընդ տառապանս
որդւոց մարդկան։

Հայեաց 'ի նոսա և գթա 'ի
չուառականան, և 'ի վրիպանաց
թիւրելոյ նոցին ուսիր ընդ անբա
տերիւրն գնալ շաւիղ։

Գ

ԲԱՐԿՈՒԹԻՒՆ

Որպէս փոքրիկ հոլմոյ զի
ուժգին բռնութեամբ արմատա-
խիլ առնէ զտունկս և վեր 'ի վայր
եղծանէ զտեսիլ բնութեան, կամ

որպէս 'ի թագիոյ բուռն սատա-
նութենէ երկրի՝ սատանեալ տա-
պալի քաղաքանին, այսպէս զայ-
րուցք առն բարկացողի տարա-
ծանեն զիւրեաւ ինքեան չարեաց.
կորուստ և վնաս եթէ մնան առ
նմա։

Մի՛ մոռանար զանձին քո տկա-
րութիւն, և նեղողամիտ լեցիս
թերութեանց այլոց։

Մի՛ մատներ զանձն քո 'ի ձեռն
կրից բարկութեան. զի զի՞նչ այ-
նու գործիցես, բայց սուր ընդ
անձն քո մեռել, կամ վերա՛ի սիրտ
բարեկամի դնել։

Եթէ փոքրուն նախատանաց համ
բերեցեր, զգօնութեան քուն
գրեսցի այն շնորհ. իսկ եթէ ջնջի-
ցես 'ի մտաց, սիրտ քո հանգիցէ
և միտք քո ոչ լեցին այլոց պար-
սաւադէտ։

Ձկցէ՞ քո տեսեալ զայր 'ի ցաս-
ման զրկեալ յիւրոյ բանէն մը-
տաց. արդ մինչ արթունդ ես
մտօք՝ զմոլեգին ցասումն այլոց
կալ քեզ 'ի խրատ զգուշութեան։

Մի ձեռն արկաներ 'ի գործ 'ի բարկութեան Էլով. ոչ ապաքէն անմտութեան Է նաւարկել ընդ ծով 'ի խառվութեան մրրկայոյզ ալեաց :

Խոհական խորհրդովք նուաճեա զգժուարսանձն բարկութիւն. խոտորեա յառթից սրրամրտութեան և ցասման. և եթէ պատճառք լինիցին՝ զգոյշ լեր անձինդ :

Սրտմտի անմիտն ընդ յոխորտալ այլոց. իսկ զգօնն առ ոչինչ գրեալ ծիծաղն զնախատանօք զոր լսիցէ :

Մի վրիժախնդիր ոխակալ լիցիս յանձին քում. քանզի ոչ մթերեալ զանձն տանիցէ, և ապականէ զբարի բարի յօժարութիւնս սրտի :

Լեր դիւրապատրաստ 'ի նեղութիւն քան 'ի հատուցումն թշնամանաց. որ պարապոյ ապատէ առնուլ զվրէժ իւր՝ անձին իւրում դարանակալ լինի, և 'ի գլուխ իւր թափէ զչարիս :

Պատասխանի ոչոք առ անձն զայրացեալ, իբրև զՆուր ածեալ զհրով՝ շինչուցանէ զբորբոքումն նորա, և 'ի թշնամւոյ բարեկամ քեզ լիցի։

Թէ գիտէիր քանի սակաւ ինչ է արժանի բարկութեան, զարմանայիր արդեօք եթէ բաց յանմտաց ոք 'ի ցասումն բրդիցի։

Սկիզբն բարկութեան՝ անմտութիւն և յեղյեղուկ բարք մարդոյ. այլ կատարած նորա արդարև ածցէ տրչանս և տապաշաւ։

Ընդ հեռս անմտութեան մոտագոյն գնայ ամօթ. և 'ի թիկունս բարկութեան արագ հասանէ խայթ մոտացն խղճի։

Դ

ԳԹՈՒԹԻՒՆ

Որպէս գարուն զի սիրէ յերեսս երկրի զտունկ գալարագեղ և զծաղիկ դեռաբողբոջ, որպէս բարեբեր լուութիւն ամարայնի, զի առոգաս և հարուստս գործէ ըզհունձս. այսպէս ձիրք գԹուԹեն պարգևս բարիս ցողեն 'ի վերայ որդւոց մարդկան։

Որ կարեկից լինի տառապելոյն՝ զանձն իւր հաճոյ ընծայեցուցանէ. իսկ որ անկարեկիրն է, հաճոյ լինել ոչ ունի։

Ոչ անսայ մնագործ մունչելոյ գառին, և ոչ սիրտ ապառուամ ընդ աղէտս այլոց խանդաղատի։

Բայց արտասուք գորովագութառն քաղցր են քան զտարտախս ցողոյ՝ որք 'ի ծայրից վարդից կաթեն 'ի ծոց երկրի։

Մի ունկնդրիցս լինիր առ ա-

զաղակն ողբոց նեղելոյն և տնան-
կի. և մի խստացուցաներ զսիրտ
քո ընդ արկածս անմեղին։

Յորժամ որբն անտերունչ յո-
ղոք անկեալ աղաղակիցէ քեզ,
յորժամ հարստահարեալ և վըշ-
տալից սիրտ այրեցն ողորմագին
արտասուօք զքոյդ խնդրիցէ ձե-
ռընտուութիւն, գութ քո անկցի
ընդ տառապանս նոցին, և եղիցիս
ձեռնտու և ապաւէն լքելոց և
անկելոց։

Եթէ տեսանիցես զմերկն ցըր-
տահար՝ վայրապար շրջելով՝ ի
փողոցի, բաց զգութս սրտի քո
մարդասիրապէս, և՝ ի թեւս բա-
րեգթութեան ժողովեալ զնա՝
թափեա՝ ի մահուանէ, և կեցցէ
անձն քո։

Մինչդեռ տնանկն հիւանդա-
գին յոգւոցհանութեամբ կողկո-
ղի՝ ի մահիճս և քաղին ոգիք նո-
ցա՝ ի զարհուրանաց սարսռելոյ
բանտի, կամ ալէզարդ գը-
լուխ ծերութեան առ քեզ՝ ի վեր
ամբարձցի նուաղեալ ակնար-

թութեամբ, գթութիւն 'ի քէն ժառելով, ժուժայցէս տակաւին փափկանալ շուայտութեամբ և զեղխութեամբ, և անփոյթ առ չքաւորն և անզգայ ընդ ապէտս նեղելոյն լինել։

Ե

ՍԷՐ ԵՒ ՑԱՆԿՈՒԹԻՒՆ

Փախիր, պատանի դու, փախիր 'ի հրապուրանաց անառակութեան, և մի տար զովոյն ցանկասիրի գերել զսիրտ քո։

Յիմարութիւն ցանկութեանն սարսռուսցէ զքեզ 'ի հեռոց նորա. և մի մատնիցես զանձն քո 'ի կորստական կուրութիւն ցասման նորա։

Մի տար զսիրտ քո 'ի քաղցր հրապոյրս նորա, և մի թողուր հոգւոյ քում ըմբռնիլ 'ի պատրանս գեղոյ նորա։

Քանզի զեղխուն ցանաքեցու-

ցանէ զվտակս առողջութեան՝ ո-
ւրոց 'ի դէպ է խառնել ընդ ա-
ռուս հեշտութեան, և ընդ հուսպ
սպառի աղբիւր նորա։

Յարբունս ծաղկեալ ոչոց 'ի
վերայ հացէ .քեզ ծերութիւն
ծանր, և յառաւօտու կենաց
.քոց խոնարհեցի 'ի մուտս արե-
գակն .քո։

Այլ գեղ կնոջ առաքինու-
թեամբ և ամօթխածութեամբ
զարդարելոյ՝ առաւել փայլէ .քան
զաստեղս երկնից։

Աչք իւր .քաղցրահայեացք
որպէս զտատրակի, անկեղծու-
թիւն և ճշմարտութիւն բնակեն
'ի սրտի նորա։

Մեղր կաթէ 'ի համբուրից շըր-
թանց նորա, հանդերձ բուր-
մամբք անուշից։

Ի մաքուր խանդաղատանաց
սիրոյ՝ սիրոփի և ազնուագոյն ևս
լինի սիրտ։

ՊՐԱԿ ԵՐՐՈՐԴ

ԿԻՆ
ԵՒ ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳԱԿԱՆՔ



Ա.

Կ Ի Ն

Լուր դուստր ձայնի զգօնութեան, և զպատգամն ուղղութեամբ տպաւորեա 'ի սրտի քում, և առաւել պայծառացին շնորհք քո. և գեղ գիմաց քոց նմանելոց վարդի, պահեսցէ նման նմին ըզփափկութիւն իւր և 'ի թառամել անդ ծաղկին։

Յառաւօտու կենաց քոց և յարբունս մանկութեան՝ յորժամ բազում ցեղն աչք որ զքեզ

զննիցեն, զգաստ լեր 'ի լսել ըզ-
բանս հրապուրանաց նոցին. ըզ-
գոյշ լեր սրտի քումմ. և մի՛ տար
ունկն սիրալիր պատրանաց նո-
ցա։

Ծանիր զքեզ հաստատեալ
'ի ճահ ընկերութեան առն, և ոչ
գերի ցանկութեանց նորա. յո-
ժանդակ նմին տուեալ են քեզ
կեանք, 'ի մխիթարել զնա խան-
դակաթ սիրով, և խնամոց նորա
փոխարէնս հատուցանել քաղցր
դգուանս։

Ո՞վ է 'ի կանայս որ գրաւեալ
ունի զսիրտ առն իւրոյ, և հնա-
զանդեցուցանէ զնա ընդ լծով
սիրոյ։

Ահաւասիկ ճեմի նա 'ի հան-
դիպոյ. անախտ մաքրութիւն՝
հանդերձ անմեղութեամբ մտացն
գիտակցութեան և պարկեշտու-
թեամբ դիմաց՝ փայլեն 'ի նմա։

Զեռք նորա 'ի խնդիր են գոր-
ծոյ, և ոտից նորա ոչ է հա-
ճոյ արտաքոյ տանն դեգերել։

Հանդերձս զգեցեալ է չափ

վայելչութեամբ, յարգեալ ժուժկալութեամբ. հեզութիւն և քաղցրութիւն ելեալ զիարդ փառաց կան 'ի գագաթան նորա։

Քաղցր են բանք լեզուի նորա, անուշութիւն մեղու կաթէ 'ի շրթանց նորա։

Համեստութեամբ համեմեալ են ամենայն բանք նորա. Ճշմարտութեամբ և զիարտիրութեամբ են պատասխանիք նորա։

Հլութիւն և հնազանդութիւն են վարք կենաց նորին. հանդարտութիւն և երջանկութի վարձք նորա։

Զգօնութիւն յառաջընթաց լինի 'ի գործս իւր, և առաքինութիւն կայ յաջմէ նորա։

Զսէր և զքաղցրութիւն բարբառին աչք նորա. այլ խոհականութիւն առեալ զդաւազանն արքունի՝ բազմի 'ի վերայ յունինցն նորա։

Առաջի նորա ամէ 'ի բերան եղեալ կարկի, և յահէ լաւութեան նորա պատանձի լիրքն։

Ի յաճախել բամբասանաց, և յընթանալ համբաւոյ ընկերին բերան 'ի բերանոյ, եթէ առ բարեսիրութեան և բարեկամութեան ոչ բացցէ զբերան իւր, մատն լռութեան հանդուցեալ կայ 'ի շրթունս նորա:

Կայանք բարութեան են սիրտ նորա, վասն որոյ և չառնու զումեքէ կարծիս չարութեան:

Երջանիկ է այր որ եգիտ զնա, երանելի են մանկունք որ կոչեցեն զնա մայր:

Ինքն վերակացու է տանն, և ամենայն ինչ յանդորրու. խոհական խնամով հրամայէ, և ըստ ելի լինին բանք նորա:

Վաղայարոյց լինի ընդ առաւօտս, և խորհի 'ի տնտեսութիւն գործոց իւրոց. ամենեցուն կարգեալ տայ զարժան սպասաւորութեան գործ:

Զբօսանս համարի զնանամն տանն, 'ի նոյն զբաղի ամենայն ջանիւ փութոյ. վայելչութիւն և չափաւորութիւն երևին ամե-

նայն ուրեք ընդ յարկաւ նո-
ցա :

Ժրաքլուխ տնտեսութեամբն
պարծանս լինի առն իւրում, և
ըստ գովեստից անբարբառ բերկ-
րութեամբ :

Իմաստութեամբ վարժէ ըզ-
ժիտս մանկանց իւրոց, և բարե-
բարոյ վարուք իւրովք օրինակ
ուղղութեան ընծայէ կենաց նո-
ցին :

Օրէնք են որդւոց բանք շար-
թանց նորա • ակնկալութիւն իւր
հլուս և կամարարս առնէ զնոսա :

Զայն ածէ, և ձեալին ծառայ-
քըն • ազդ առնէ մատամբ և վճա-
ռի գործն • քանզի օրինաց սիրոյ
անսան սիրտք նոցա, և բարե-
բարոյ հրամանք նորա թեւս տան
գարշապարաց նոցին :

Ոչ վիքանայ 'ի յաջողութիւնս
հողմով ամբարտաւանութեան,
և դեղով աննկուն համբերու-
թեան պատէ զվէրս բաղդի :

Խրատք և գուրթք նորա նուա-
զեն և ամոքեն զխռովութիւն և

զվիշտս և զարկածս, մերձեալ 'ի սիրտ նորա՝ մխիթարի այր իւր։

Երանի՛ առն որ առ զնա 'ի կին, և որդւոյ որ կոչիցէ զնա մայր իւր։

Բ

ԿԱՆԱՄԲԻ

Անսա խրատու պատուիրանաց Տեառն, և ա՛ռ քեզ կին։ Արա քեզ կին մի, և լեր անդամ պիտանի ընկերութեան մարդկան։

Տես խնամով, և մի վաղվաղեսցես յընտրելն քեզ կին, քանզի յընտրութենէ այսր գտցես առ յապայ զանդորրութիւն կենաց։

Կոյս որ սիրէ ժամավաճառ լինել 'ի պէջանս 'ի յարդ և 'ի զարդ զգեստուց, կամ ընդ գեղ անձին իւրոյ սիրանայցէ, և գովեստից որսորդ ելցէ, կամ ատէպ ծիծաղիցի և բարձրաձայնս բարբառիցի։ որոյ ոտք իւր ոչ դա-

գարեցին 'ի տան հօր իւրոյ, և աչք նորա լրբենիք յածեցին 'ի դէմս մարդկան. ընդ այնպիսւոյն՝ թէպէտ և արեգական նման փայլեցէ, և անդամ մի ակն արկանիցես ընդ տեսիլ դեղոյն, և մի գնասցեն գարշապարիք քո ընդ շաւիղս նորա, և մի սնոտի հրապուրանօք ցուցակութիւնք մըտաց գերեսցեն զանձն քո։

Այլ եթէ գիւրազգած սրտի հաղորդ եցէ և քաղցրութիւն բարուց 'ի նմա, և նեղբինիք մտացն՝ հաճոյագոյն քեզ եցեն քան զարտաքին երևոյթ վայելչութեանն զնա տարցես 'ի տուն քո. քանզի այնպիսւոյն վայել է լինել քեզ մտերիմ, և կենաց քոց կըցորդ, և ամուսին գրկաց քոց։

Իբրև յօրհնութիւն երկնառաք՝ գութ արկեալ 'ի վերայ այնպիսւոյն, սիրես խնամով և պահես զգուշութեամբ. և լեր նմա սիրելի բարեմոյն բարուք։

Տիկին տան քո է նա, վասն այնորիկ ակնածութեամբ մատեցես

տու նա, զի և ծառայք քո հնազանդ լինիցին նմա։

Մի վայրապար կագեր և խափան լինիր բաղձանաց նորա։ Հաղորդ է նա վշտաց քոց, լիցի և վայելիցն քոց մանակից։

Հեզութեամբ խրատեա զխաչանան, և մի խստութեամբ պահանջեր 'ի նմանէ ցածութիւն։

Մի թագուցաներ 'ի նմանէ ըզծածուկս սրտի քո, և մի անձնամատան լինիցիս. քանզի անկեղծութեամբ են խորհրդակցութիւնք նորա։

Մի դրժեր զանկողինս նորա, քանզի մայր մանկանց քոց է նա։

Ի ցաւս և յախտս եթէ տեսանիցես զնա ջերեալ, կաթոգին սիրով դիւր արա վշտացն. հայեցուածք կարեկցութեան ամոքեսցեն զտառապանս նորա, և սիրալիր ակնարկութիւն մի հզօրագոյն լիցէ յապաքինել քան զտան բժիշկս։

Ծանիր զփափկութիւն և զտը-

կարութիւն բնութեանն, և թե-
ղութեանց նորա համբերող լեր
ներողութեամբ. մի մոռանար և
զքոյդ անկատարութիւն անձին։

Գ

ՀԱՑՐ

Ծնողդ դու, տէս քաջ, որպէ-
սի սանդեցաս քեզ սանդ.
պարտք են քեզ սնուցանել զոր
ծնարդ։

Բարութեան կամ չարի ման-
կանդ դու ես պատճառք. և քեզ
ընծայեցի մանուկդ պիտանա-
ցու կամ անպիտան՝ առ ընկե-
ղութիւն մարդկան։

Կանխեա դաստիարակել զոր-
դի քո, և կանոնօք ճշմարտու-
թեան հաստատեա զմիտս նորա։

Քննեա ուշով զընդաբոյս բեր-
մունս յօժարութեանց նորին, և
ուղղեա'ի տիս տղայութեան, զի

մի բնաւորեալ սովորութեան չարի ընդ հասակին զարդասցի։

Ուղղաբերձ աճեցեալ բարձրասցի նա որպէս զեղևին 'ի դըլուխս լերանց, և գլեսցէ գաղաթամբն զծառուվք անտառի։

Որդի անխրատ՝ նախատինք հօր իւրոյ. որդի առաքինի՝ փառք են սպիտակափայլ ալեաց հօր։

Քո է երկիրն, և քեզ մնայ զայն գործել. զոր սերմանեան՝ զնոյն և հնձեսցես։

Ուսո՛ նմա զհնազանդութիւն, և օրհնեսցէ զքեզ. զհամեստութիւն, և մի կորասցի ամօթով։

Ուսո՛ նմա զերախտագիտութիւն, և գոցէ շնորհս. զմարդասէրութիւն, և սիրելի եղիցի։

Ի ժուժկալութիւն վարժեա զնա և անախտ լիցի. 'ի խոհեմութիւն, և յաջողեսցի նմա։

Կրթեա զնա յարդարութեան, և պատուական լիցի յաշխարհի. յանկեղծութեան, և ոչ լիցի արհամարհուս այլոց։

Ծիր յարդարեա զնա, և բաղ-

մասցին ինչք նորա. զգթութիւն ուսո՛ նմա, և վերհանձն եղիցի։

Վարժեա զնա 'ի գիտութիւն, և օգտակար եղիցին կեանք նորա. հրահանգեա զնա յաստուածպաշտութեան, և երանելի լիցի 'ի մահուն իւրում։

Դ

ՈՐԴԻ

Քննեցէք զգործս Աստուծոյ և ուսջիք զիմաստութիւն. խրատեցարուք օրինակաւ զոր ընծայեն ձեզ արարածք ձեռաց նորա։

Երթ յանապատ որդեակ իմ, և տես յամայութեան զձագ ագրագլի, և ուսիր 'ի նմանէ զծերատածութիւն. զի 'ի թեւս իւր բարձեալ կրէ զհայրն հնացեալ, բնակեցուցանէ զնա յանքոյթ ակատանի և ջամբէ նմա կերակուր։

Քաղցր են դուք զաւակաց քան զանուշունս խնկոց Եղեմացւոց նուիրեալոց 'ի բազինս արեգական. բուրազուարձ քան զօդս անուշահոտս զոր արևմտեանն սղոխ սաստկաշունչ ածէ յերեսաց մշկահոտ և քրքմաւէտ դաշտացն Արաբիոյ։

Ծանիր զերախտիս հօր՝ որ ծնաւն զքեզ, և զմօր՝ որ սնոյցն զքեզ։

Անսա բանից որք ելանեն 'ի շրթանց նորա, զի վասն բարութեան քո խօսին ունկն դիր խրատուց նորա, քանզի 'ի սիրոյ սրտին բղխեն։

Դարման տարաւ քեզ վասն առողջութեան, աշխատ եղև վասն անդորրութեան անձինդ. վասն այնորիկ պատուեա զաչիս նորա ծաղկեալս, և մի ամաչեցուցաներ զարծաթափայլ հերս ծերութեան նորա։

Յիշեա զտխեղծ հասակ մանկութեան քո, և մի մոռանար զեռանդն յոխորտ պատանեկու-

թեան քո։ և երկայնամիտ լեր տկարութեան ծերացեալ ծնողացդ քոց։ և մի լքանիցես անօգնական զհասակն դանդաչեալ։

Ամիսոիեացես 'ի խաղաղութիւն զսալիտակափայլ ալիս նորա 'ի քնարան շիրմին։ և որդիք քո 'ի քէն ուսեալ զինանամ բարեգթութեան, փոխարէն բարի հատուցեն բարեպաշտութեան քում։

Ե

ԵՂԲԱՅՐ

Մեր հօր որդիք է.ք դուք, զգուշացեալք նովին խնամոց թեւարկութեամբ։ և սոքոնք միոյ մօր դիեցուցին զձեզ։

Կապեա զսիրտ քո ընդ եղբարս քո կապանօք սիրոյ, և բնակեացեն 'ի տան հօր քոյ խաղաղութիւն և երջանկութիւն։

Եւ եթէ դէպք պահանջեացեն անջատել ձեզ յիրերաց, անմո-

ուց կալջիք զանլոյծ զօդ. արե-
նակցութեան որ պարտականա
կացուցանէ զձեզ 'ի սէր և 'ի միա-
բանութիւն. մի լիցի ձեզ զայր
օտար նախատպատիւ առնել քան
զարիւն հարազատ։

Եթէ ձախողեաց եղբօր քում՝
օգնեա նմա՝ և եթէ քոյր լիցէ քո
վտանգեալ վշտօք՝ մի բարձի թո-
ղի առներ զնա։

Եւ յայտմանէ ոչ պակասեսցէ
նպաստ ընչից հօր քո առ ամե-
նայն տուն իւր՝ և 'ի սիրել ձեր
զմիմեանս՝ խնամք նորա անպա-
կաս լիցին 'ի ձէնջ։

ՊՐԱԿ ԶՈՐՐՈՐԴ

ՊԱՏՄԱՆՔ ԿԵՆԱՑ

Ա

ԻՄԱՍՏՈՒՆ ԵՒ ՏԳԷՏ

Շնորհք գիտութեանց տուրք են Աստուծոյ. նա տայ իւրաքանչիւր որչափ ինչ վայելուչ և կարեւոր վարկանի։

Նա ինքն Տէր շնորհաշաղարդեաց զքեզ հոգւով իմաստութեան և լուսաւոր արար զքեզ գիտութեամբ ճշմարտութեան. հաղորդեաց արա զտգէտն հանճարոյ քում՝ զի հրահանգիցի, և զիմաստունն՝ զի առաւել ևս շահեսցի։

Խմաստութիւն ճշմարիտ՝ ոչ ընդ անձն պանծայ և ոչ զարգէտան արհամարհէ. խմաստունն ատէպ յերկեպայս լինի, և զկարծիս իւր փոխէ: Յամառ է տխմարն և 'ի կարծիս մոլոցն սեւեռեալ մնդի. զամենայն խոստանայ գիտել, և տգիտութեան անձինն անդէտ է:

Ատելի և անարգ են փառք անապարծից, և ախտ է մոլեկան անձնապով շաղակրատութիւն: Այլ գործ է՝ համբերատար խմաստութեամբ անսալ յիմարին շաղփալփանաց, և ներել անճահ և անոպայ գործոց:

Մի մեծամտեր ընդ հանճար քո, և մի պանծաս ընդ բազում հմտութիւն քո. քանզի զի՞նչ աւելի է գիտութեան մարդոյ 'ի կուրութենէ և 'ի մոլորութենէ:

Ճանաչէ խմաստուն զթերութիւնս իւր, և խոնարհի և ոչ խնդրէ զհաճոյս իւր. իսկ անմիտն սիրանայ զանխուլ ընդ սակաւաջուր վտակ խմաստից, խնդայ ընդ խիճան զոր ընդ աւէօք տե-

անկիցէ, և 'ի վերս ամբարձեալ ցոյցս տայ կերև մարգարիտս վերբերեալ, և գովութիւնս լուեալ յերկրորդ՝ զուարճացեալ հրաշուի։

Պարծի ընդ գիտութիւն ուսպէտ իրաց. իսկ յարժանն՝ անգիտանայ և չամաչէ։

Նա և 'ի շաւիղս խնամատութեթեմակոխեալ՝ զալամարութեան զհետս կրթի. վաստակաբեկ եղեալ ժառանգէ զամօթ, և ինչ 'ի ձեռս ոչ բերէ։

Բայց հանճարեղն մակացութեամբք զմիտս իւր կրթէ. ընդ յառաջադիմութիւն արուեստից բերկրի, և կենցաղօգուտ հնարից լեալ գտակ՝ գովութեամբ և փառօք նախամեծար լինի 'ի ժողովրդենէ։

Եւ 'ի վերայ այսոցիկ զառաքինութիւնն գիտէ ուսումն դերադոյն. և ոչ դադարէ յամենայն 'ի կեանս իւր պարապել 'ի հայթայթանս երջանկութեան։

Բ

ԾԵԾԱՏՈՒՆ ԵՒ ՏՆԱՆԿ

Որ ընկալաւ 'ի տեառնէ մեծութիւն ընչից, և միտս առողջս վարելոյ նոքօք ըստ պէտս, չէք իբրև զնա սիրելի և պատուական։

Զուարթ ակամբ հայի 'ի դանձըս իւր՝ իբրև յօժանդակս բարեգործութեան։

Պաշտպան կայ տնանկին, և հարստահարեալն փրկէ 'ի ձեռաց հզօրի։

Այցելու և կարեկից լինի տառապելոց. քննէ զկարօտութիւն նոցա, քաջալերէ և մխիթարէ մատուցանէ նոցա զդասս մտօք առանց մտափառութեան։

Օգնական լինի տկարին, և վարձահատոյց արժանաւորաց. խրախուսեալ զօրացուցանէ զճշմարտութիւն, ձեռն տայ վանմանան

ոգւով, և զամենայն խորհուրդ պիտանի յառաջ վարէ։

Յառաջեցուցիչ է մեծամեծ գործոց. երկիր նորա բարգաւաճ, և երկրագործն անպարապ 'ի վաստակոց. մտաբերէ 'ի նոր ամսոր ձեռնարկս, և արուեստք 'ի զարգացումն ընթանան։

Զաւելորդս սեղանոյն՝ համարի բաժին ազքատաց դրացեաց իւրոց, և ոչ անման առնէ զնոսա։

Մեծութիւն վիճակի ոչ լինի խափան բարեսէր կամացն. վասն այնորիկ խնդայ անսգիւտ ուրախութեամբ ընդ ճոխութիւնս իւր։

Վայ այնմիկ է որ անձին միայնոյ գանձէ, և միայնակ յօրանայցէ 'ի բարիս։

Որ ամաչեցուցանէ զտնանկն, յիշէ իսկ ոչ զտաժանաբեկ վաստակս նորա։

Ոտնհար լինի անզգայութիւն, և ոչ խառնվին աղիք նորա 'ի գութս եղբօր։

Իբրև զկաթն ընդէ զարթաս-սուս որբոյն. աղաղակ և հեծու-թիւն այրեաց՝ քաղցրաձայնու-թիւնք երգոց թուին նմա։

Յաղագս հուլթենէ խաստացեալ է սիրտ նորա. աղէտք և փորձու-թիւնք այլոց այնուհետև ոչ ինչ ազդեն 'ի նա։

Սակայն անէծք անօրինի զհետ նորա ընթանան. զոր հանապազ դանդաչէ երկիւղիւ. ամբոխումն մտացն և զոչաքաղութեան տենչ՝ վրէժս անդադարս պահանջեն 'ի նմանէ, վասն զբկելոյ նորա և տա-ռապեցուցանելոյ զայլս։

Իբրև ոչինչ մի են տառապանք աղքատի առ անհնարին տագնա-պաւ խղճի գիտակցութեան ան-ձին նորա։

Բազում ինչ է որ մխիթարէ և հատանէ զսուգ տնանկին։

Մատչի 'ի ճաշ իւր անդորր ոգւով, և ոչ գոն նորա պորտա-բոյծ և հացակատակ բարձակից։

Անդ ոչ սպասարարք զնրեարս մղեն, և ոչ գժդմնելոց լսին ա-ղաղակք։

Հրաժարեալ՝ի խահամոք իսրտըկաց ընչեղին, ազատ է և յախտից նորա։

Քանի՛ քաղցր է՝ի քիմն նորա հաց իւր. քանի՛ ախորժ է ջուր ծարաւոյ նորա։ Քաղցունք և անուշարարքք են նմա այսոքիկ քան զամենայն դահամունս փափկալար զեղխեալոց։

Վասամակովք իւրովք տածէ զառողջութիւն, և հայթհայթէ զհանդիսաս անձին, յորմէ անմասն են գիրգ անկողինք յուլացեալոց։

Պարկեշտութեամբ չափաւորէ զքաղց իւր. և հանդիսաս չափով՝ հեշտալի է նմա քան զամենայն մեծութիւն և զփառս աշխարհի։

Վասն այսորիկ մի՛ պարծեսցի որ հարուսան է ընչիւք՝ ընդ ճոխութիւն և ընդ հանդերձանս շքոյ իւրոյ. և մի՛ անկածն յընչից՝ արտաքեակ և յուսահատ լիցի՝ի տուայտելն. քանզի հաւասար բաժանէ երկաքանչիւրոց նախախնամութիւն Բարձրելոյն ըզպարգևս իւր և զբարիս։

Գ.

ՏԷՐ ԵՒ ԾԱՌԱՅ

Մի արանչեր, ով մարդ, ընդ ծառայութեան քո պայման. զի հրաման Աստուծոյ է քեզ, և բազում շահք են քեզ անտի. քանզի կարձէ 'ի քէն զհոգս և զտաղտապանս կենաց։

Հաւատարմութիւն՝ փառք ծառայի. հպատակութիւն և ունկնդրութիւն՝ պատուական շնորհք են նորա։

Համբեր յանդիմանութեանց և կշտամբանաց տեառն քո՝ և մի ընդդէմ բանս բարբառիցես 'ի պարտաւադէտ լինել նորա. որպէս զի ընդունելի լիցի առաջի Տեառն հրաւական քո լուութիւդ։

Մի՝ դիր օգտի տեառն քոյմ. արթուն լեր 'ի տնտեսութեան գործոց նորա, և հաւատարիմ յոր ինչ և աւանդեսցէ 'ի քեզ։

ժամք քո և վաստակք նմա անկանին. տես մի զլկեսցես զնա. քանզի վասն դոցին հատուցանէ քեզ վարձս։

Եւ դու որ տէրդ ես և իշխան, լեր արդար և ողորմած առ ծառայ քո, եթէ ակն ունիս հաւատարմութեան և փութաջան սպասաւորութեան 'ի նմանէ, և եթէ հնազանդութիւն կամակար պահանջես 'ի նմանէ։

Մարդ է և նա. տես, դուցէ գոռոզութեամբ և բռնութեամբ խռովեցուցանիցես զոգի նորա։ Եւ երկիւղ ոչ ծնցի զսէր։

Ընդ կշտամբանս և ընդ իրաւունս իշխանական մեծութեանդ խառնեսջիր գութ. որպէս զի յանդիմանութիւնք քո գամագիւտ լիցին 'ի սիրտ նորա, և ըստ պատահարութիւն՝ զբօսանս համարեսցի նմա։

Եւ ծառայեսցէ քեզ միամտութեամբ առ երախտեաց, և լուիցէ քեզ խնդութեամբ առ'ի սէր. և մի վերջացիս յարդար հա-

տուցմանէ վաստակոց և հաւա-
տարմութեան նորին ։

Դ

ԻՇԽԱՆՔ ԵՒ ԻՇԽԵՑԵԱԼՔ

Ո՛վ դու՝ զոր երկինք պատուե-
ցին, և որդւոց մարդկան հաճոյ
թուեցաւ համբառնալ 'ի վերոյ
իւրեանց իբրու կառավար ուղ-
ղիչ, խելամուտ լեր քանի՛ մեծ և
պատուական աւանդ տուաւ
քեզ, առաւել քան զփառս պաշ-
տաման քոյ ։

Ծիրանիս զգենուս և 'ի գա-
հոյս բազմիս. թագ վայելչութեա
գեղայօրեն պճնէ զճակատ քո,
գաւազան արքունի կայ 'ի ձեռին
քում. այլ ոչ եթէ վասն քո միայ-
նոյ տուեալ է քեզ այդ ամենայն.
և ոչ այնպէս առ անձին քո շահ,
որպէս առ օգուտ ժողովրդեան
քո ։

Թագաւորի փառք՝ բարօրու-

թիւն և յաջողողութիւն ժողովրդեան իւրոյ. զօրութիւն և մեծութիւն նորա՝ հանգուցեալ է 'ի սիրտս նոցա։

Բարձր և վսեմական են խորհուրդք թագաւորացին՝ հանդոյն աթոռոյ նորա. 'ի բարձունս մտաքերել և ըստ զօրութեան իւրում՝ մեծի բուռն հարկանել։

Կոչէ առ ինքն զնմանատունս տէրութեան իւրոյ. խորհրդակից լինի ընդ նոսա ազատօրէն, և կարծեաց միոյ միոյ 'ի նոցանէ ունկն մատուցանել։

Խնամով խնդրեալ ընտրէ 'ի ժողովրդենէն, և 'ի վերայ հաստեալ բաւականութեան իւրաքանչիւր՝ պարապեցուցանէ զնոսա 'ի գործ պատկան և 'ի դէպ։

Դատաւորք նորա արդարադատք, վերակացուք նորա խոհականք, և սիրեցեալք 'ի նմանէ անենդք։

Պաշտպան լինի հնարից աղուեստից և բարգաւաճեն. ընդ հովանեաւ խնամոց նորա ծաղ-

կեալ ամեն գիւտք և մակացու-
թիւնք։

Ընդ Հարտարս և ընդ քաջուս-
մունս կենակից լինի, և վառէ նա-
խանձ 'ի սիրտս նոցա. Ջանք և էր-
կասէր վաստակք նոցա առաւե-
լուն զփառս թագաւորութեան
իւրոյ։

Զ Ջանս վաճառականի՝ որ 'ի
շահավաճառ զանձն յեղեալ է,
զարթնութիւն մշակին՝ որ ար-
գասաւորութեան երկրի ուշ է-
դեալ բազմացուցանէ զպտուղս,
զՀարտարութիւն հնարագէտ ա-
րուեստաւորաց և զեռանդն ի-
մաստասէր համբակաց, շնորհօք
և փառօք իւրովք պատուէ, և
առատաձեռն պարգևօք վարձա-
հատոյց լինի նոցա։

Գաղթականս առաքէ, նաև
կառուցանէ մեծամեծս. բանայ
գեռոց Հանապարհս նորս 'ի գիւ-
րութիւն նաւաչու ընթացից, և
նաւահանգիստս անքոյթս կազ-
մէ։ Ծառայք նորա ընուն մեծու-
թեամբ, և զօրութիւն արքայու-
թեան նորա աճէ օր ըստ օրէ։

Կարդէ օրէնս իմաստուն և արդար. ժողովուրդ նորա յապահովի վայելէ յարդիւնս գործոց իւրոց. և պահպանութեամբ օրինաց երջանիկ լինի։

Ի գթութիւն հաստատեալ է զդատաստանս իւր. այլ 'ի պատուհաս ամբարշտաց խստացուցանէ զդէմս իւր, և դատի դատաստան անաչառ։

Դիւրալուր է առ բողոք ժողովրդեան. երագ է 'ի փրկել զնոսա 'ի ձեռաց նեղչաց իւրեանց, և 'ի սանձել զձեռս հարստահարողաց։

Վասն այնորիկ եբրև զհայր իւրեանց սիրեն և մեծարեն զնա ժողովուրդք. հոգաբարձու համարին զնա ամենայնի՝ յորս վայելեն։

Յօժարակամ միամտութիւն նոցա տարածանէ զսէր իւր յընդհանուրս, և 'ի զգուշութիւն բարեկենդանութեան ժողովրդեանն խորհի զտիւ և զգիշեր։

Ոչ ոք բանայ զբերան իւր ընդ-

դէմ՝ նորա, և ոչ լսի ուստեք շը-
շունչ քրիստոնչանաց. թշնամիք նո-
րա ոչ հաստարձակին նեղել զաշ-
խարհ նորա։

Մխամիտք և նախանձաւորք են
հպատակք նորա՝ ի ապատու նո-
րին. իբրև զարիսակ պղնձի պաշա-
պան կան նմա, և գունդք բռնա-
ւորաց հալածին յերեսաց նորա
իբրև զյարդ՝ ի կալոց առաջի հով-
մոյ։

Խաղաղութիւն անեղկեան՝
բնակեցուցանէ զժողովուրդ իւր
յերանութեան. փառք և զօրու-
թիւն նորա պատին զանթառով
նորին մինչև յաւիտեան։

ՊՐԱԿ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՊԱՐՏՔ

Ա.

ԲԱՐԵՍԻՐՈՒԹԻՒՆ

Յորժամ զմտաւ ածիցես զընտիր ընտիր ձիրս ընտրութեան քո, կամ՝ յորժամ խոկացիս 'ի թերութիւնս քո, մի՛ մոռանար զերախտիս այնոքիկ որ մեծարեացն զքեզ բանիւ մտաց, զարդարեաց բարբառով բերանոյ, և հաստատեաց զքեզ 'ի ժողովս մարդկան, որպէս զի կարող լինիցիս ընդունել և մատուցանել նպաստս և երախտիս։

Ի ձեռն այլոց մատակարարին

քեզ կերակուր և հանդերձ, կահք կարևորք, պաշտպանութիւն 'ի զրկանաց և 'ի հարստահարութեանց, և ամենայն վայելք և զբօսանք և փափկութիւն կենաց քոց. և զայս ամենայն յընկերութեան մարդկան վայելել հնար է քեզ:

Քո իսկ շահ անձին պարտաւորտ առնէ զքեզ բարեկամ և օգնական կան լինել մարդկան, որպէս զի և դու գոցես շնորհս առ 'ի նոցանէ:

Որպէս վարդ 'ի ծոցոյ իւրմէ բուրէ զանուշահոտութիւն, այսպէս և սիրտ առն դթասիրի զբարիս:

Ինքն վայելէ յանդորրութեան խաղաղական մտաց, և խրախն լինի ընդ բարեբաստութիւն և ընդ յաջողութեան դրացեաց իւրոց:

Դարձուցանէ զուունկն իւր 'ի լոյս բամբասանաց, և կարեկից լինի ընդ ողէտս թերութեան մարդկան:

Սիրէ զբարերարութիւն, և պատճառս խնդրէ բարիս առնել

լոյ. 'ի սիրոյնէ զայլս, ինքնին միսի-
թարի։

Վասնզական մաքք ցանկոյ ե-
բանութեան ամենայն մարդոյ. և
յառաջութենէ սրտին՝ ամենե-
ցուն լինի ձեռնտու և օգնական։

Բ

ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ

Յորժամ խաղաղասէր արդա-
րութիւն տիրէ 'ի ժողովս մարդ-
կան՝ հաստատուն երջանկութիւն,
և ամենայն ոք անկասկած վայելէ
'ի բարիս իւր։

Ժուժկալութեամբ 'ի չափու-
կալ զիղձս սրտի քո, և արդա-
րութեամբ առաջնորդեա կամաց
քոց։

Մի՛ չարտակներ յինչս ընկերի
քո, և մի՛ յանօթ ուրուք ձեռ-
նամուխ լինիցիս. այլ 'ի բաց տրա
զձեռն քո յամենայնէ որ ոչ իցէ
քո։

Մի անտար մի և միտամ խմիք բանտարկութեան, և մի տար թոյլ խռովայոյզ խորհրդոց նեղել զանձն քո, և ամբառնալ ըզձեռս քո 'ի վերս անձին քո։

Զընկերէն մի չարախօս լինիցիս, և մի սուտ վկայեսցես զուսմէք։

Մի կաշառաբեկ առներ զծառայ նորա, և մի տարտուցաներ 'ի նմանէ. քաւ լիցի քեզ խոտորեցուցանել զկին գրկաց նորա։

Մի դիցես վէրս անբժշկականս 'ի սիրտ նորա, և մի անիրաւեսցիս 'ի նա անիրաւութիւն՝ որում ոչ լիցէ փոխարէն հատուցանել։

Լեր անթերի արդարակ յորժամ գործ լինչ լիցէ քո ընդ ընկերին և դաշն ուխտի. և զոր կամիս զի արասցեն քեզ այլք՝ տրա և դու նոցա նոյնպէս։

Հաւատարիմ լեր յաւանդն, և մի խարդախեր որում վստահ լինի 'ի քեզ. գիտեա զի յաչս Տն առ հատարակ մեղք են և գողօնք և դաւանք։

Եւ անանկն մի զօշաքաղ լինի-
ցիս և մի զմշակն զրկեացես 'ի
վարձուց։

Իսուրեաւս վաճառուց ունկն
մատո ձայնի գիտակցութեան
քում. շատացիր փոքուն, և մի
ագահեր՝ զոգիտութիւն գնո-
ղին նիւթ առեալ։

Հատո՛ զոր պարտիս. քանզի 'ի
պատիւ անձինդ յուսացեալ հա-
ւատաց քեզ որ է ան. նուաստու-
թիւն և անիրաւութիւն մեծ է
չհատուցանել զարժանն։

Եւ վախճան բանիս, քննեա
զանիրա քո, ո՛վ որդի ընկերութե-
զինշոգականդ կալ քեզ 'ի նպատա-
և եթէ պարտական յիմիք գացես
զանձն քո, յամօթ լեր և տրրտ-
մեաց, և փութա զարժան փոխա-
րինին հատուցանել։

Գ

ՈՂՈՐՄԱԾՈՒԹԻՒՆ

Երանի՛ որ արկ 'ի սիրտս իւր զսերմն գթասիրութեան. զսէր և զողորմութիւն գոցէ նա։

Գեղք բարութեան բղխեսցեն յաղբերէ սրտի նորա, և յորդեսցեն վտակք յօգուտս մարդկան։

Ձեռն տայ և միխիթար լինի նա տառապելոց 'ի վիշտս նոցա, և խնդայ յօժանդակել յաջողութեան ամենայն մարդկան։

Ոչ դնէ մեղս դրացւոյն, արհամարհէ զբան նախանձու և զատելութեան. և զքսութիւն ոչ առնու 'ի բերան։

Ներէ անիրաւութեանց և յանցուածոց, և ջնջէ 'ի մտացն զապտխտիս մարդկան. վրէժք և ոխութիւնք ոչ գտանեն տեղի 'ի սիրտս նորա։

Զարի չար ոչ հատուցանէ փոխարէն, և զԹշնամիս անգամ ոխերիմն ոչ առեայ. այլ անիրաւութեանց նոցա յանդիմանութիւն սիրոյ մատուցանէ։

Մորմոքի ընդ ցաւս և ընդ ալէոս մարդկան. գուն գործէ Թեթեւացուցանել ըզբեռն տառապանաց նոցա, և վարձս վաստակոցն համարի զինդալն ընդ յաջողութիւնս նոցին։

Շինուցանէ զբորբոք ամենի ցասման. խաղաղարար լինի հակառակողաց, և զանձինս զայրացեալս ցածուցանէ. զդէմ ուն նի չարեաց նախանձու և առելութեան. գովէ և գործակից լինի բարի բարի խորհրդոց դրացեաց իւրոց։ Վասն այնորիկ յիշատակ անուան նորա գովութեամբ և օրհնութեամբ։

Դ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Որպէս բարուենակք ծառոյ զի խաղացուցանեն զհիւթ կենդանաբար յարմատն որ 'ի վերս ամբարձեալ ունի զնոսա ։ և որպէս գետ զի վարեալ հոսէ զաւելս իւր 'ի ծով՝ յորմէ սկիզբն առնուր ։ այսպէս երախտագիտութիւն սիրտ զուարճացուցեալ բերկրի 'ի հատուցման փոխարինի բարեացն զոր եդիր ։

Խնդամիտ սրտիւ շնորհատարս զանձն գաւանիս ։ սիրով և պատուով հայի յայն որ արար նմա ։

Եւ եթէ ձեռն իւր ոչ հասցէ կշռել բարեացն փոխարէնս , բարեսէր կամքդ զիշատակ նոցին առնէ 'ի սրտի , և ոչ մոռանայ յամենայն 'ի կեանս իւր ։

Այլ առատաձեռն նման է ամպոց երկնից , որք տեղան յերկիր զծաղիկ , զբանջար և զպտուղ ։

սիրտ՝ ապաշնորհին անապատ է աւազուտ. ըմպէ անյագ զանձրևն երկնաւոր, և ծածկեալ ընդ երկրաւ՝ պտուղ և ոչ մի բերէ։

Ընդ բարերարին քուա՛մ մի նախանձիր, և մի կեղծաւորեր թագուցանել զշնորհս նորա որ առ քեզ. զի թէպէտ լաւագոյն է տալն քան ընդունել, և բարերարութիւն զարմանս բերէ, այլ շնորհապարտ խոնարհամտութի որսայ զսիրտ, և հաճոյ է յաչս Աստուծոյ և մարդկան։

Մի ընդունիցիս շնորհս յամբարտաւանէն, և մի լիցիս շնորհապարտ անձնասիրի և ժլատի, զի մի անոտի պարծանօք յամօթ ածցեն զքեզ։ Ապահովութեան տունչ ոչ յոգեմոյ։

Ե

ԱՆԿԵՂԾՈՒԹԻՒՆ

Ո՛ որ զմայլեալդ ես գեղով ճշմարտութեան, և հաստատեալ զսիրտ քո յանպատճոյճ հրապոյրս նորա. լեր նմա հաւատարիմ և մի թողցես զնա. ժուժկալութիւն քո յառաքինութիւնս՝ փառաւք և պատուով պսակեսցէ զքեզ։

Բերան ճշմարտախօս զատուդութիւն տնկէ՝ ի սրտի, երկբանութիւն և բան նենգաւոր՝ ոչ եկանեն ընդ շրթունս նորա։

Շատագնի ընդ ատութիւնս և խռովի ընդ դաւանս, այլ անքթիթաչօք խօսի զճշմարտութենէ։

Զգոյշ կայ պատուոյ և մեծութեան անձին իւրոյ, այլ նուաստութիւն համարի զկեղծաւորութիւն։

Բանք իւր յամենայն ժամ զու-

գակից.ք են խորհրդոց մատցն. ոչ երբէ.ք շփոթի և խռովի. յանձ նասպասման է 'ի ճշմարտութեան խրատ, և զանգիտէ 'ի սուտ թենէ:

Ծանր է նմա զինչանել 'ի խարդախութիւն. քան խորհրդոց սրբոյն իւրոց խօսի բերան նորա:

Խորհրդով և զգուշութեամբ բանայ զշրթունս իւր. միտ դնէ ճշմարտին, և խօսի կշիռ չափով:

Խորհրդակից լինի որպէս բարեկամ, կշտամբէ անվեհեր, և ոչ անկանի բան մի 'ի խոստմանց նորա:

Դարան գաղտաածածուկ սիրտ կեղծաւորի. կերպարանօք ճշմարտութեան պատրուակէ զբանս սուտս, և ամենայն կեանք նորա խարդախութեամբ է:

Խնդայ 'ի վիշտս, և տրտմի 'ի զուարճութեան, և խօսի վայրապար:

Գործէ 'ի խաւարի հանգոյն խլրդան, և կարծէ զանձն զերծ 'ի վտանգաց. այլ անձնամատն լինի

'ի լոյս առբերեալն, և հոլանեալ ծանակի տղմաշաղախ գլուխ ներ։

Կեայ անձկութեամբ զամենայն աւուրս իւր. անմիաբանք են լեզու նորա և սիրտ։

Զանուն արդարոյ հնարի ժառանգել, և մատչի առ նա իբրև զմոերիմ, առ 'ի նենգել ճարտարմտութեամբ։

Անմիտ, Ջանք քո և վաստակք առ'ի ծածկել որ ինչ եսդ՝ հասուցեն քեզ աշխատութիւն անոտի, և ոչ բնաւ որպէս կամիցիս երևեցուցեն զքեզ. ծիծաղին զխորամանկութեամբ քով որդիքն իմաստութեան, յորժամ յանկարծակի պահու մերկասցի պատրուակ քո և մատնցոյց լինիցիս ծանակեալ և դարձեալ։

ՊՐԱԿ ՎԵՑԵՐՈՐԴ



ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Մի է տէր Աստուած՝ սկիզբն և արարիչ ամենայնի, տեսուչ աշխարհի, ամենազօր, մշտնջենաւոր անքաւելի։

Արեգակնդ՝ որ շքեղափայլ պայծառութեամբ դիմացն լուսաւոր առնէ զաշխարհս՝ ոչ է Աստուած. տապով իւրով կեանս պարգևէ բուսոց և անկոց երկրի. հայեաց 'ի նա իբրև 'ի ստեղծուած ձեռին Աստուծոյ, այլ մի պագանիցես նմա երկիր։

Միայնոյ Բարձրելոյն և ամենագիտի և ամենաբարւոյ Աստու-

ծոյ վայելեն երկրպագութիւն և պատիւ և փառք և գոհութիւն։

Որ տարածեալ ձգեաց ձեռամբ զհաստատութիւն երկնից և մատամբ իւրով դծեաց զՀանապարհս աստեղաց։

Որ դնէ սահման Ովկիանոս, և ոչ անցցէ ընդ այն. և առ ծովս մրրկայոյզս ալէտանչս ասէ, անշարժս լերուք։

Որ գողացուցանէ զերկիր, և սասանին յահէ նորա ազգք որդւոց մարդկան. ո արձակէ զփայլատակունս իւր և ահաբեկ առնէ զանդգամն։

Որ 'ի չգոյէ ած 'ի գոյ զաշխարհս բանիւ բերանոյ իւրոյ. որ հարկանէ զնոսա բազկաւ իւրով, և բնաջինջ բնաբարձ լինին։

Երկիր պագ փառաց ամենակալին, և մի զարթուցաներ զցասումն նորա, գուցէ կորնչիցիս յերեսաց նորա։

Խնամք Տեառն ձգին 'ի վերայ ամենայն ստեղծուածոց իւրոց. ուղղէ և առաջնորդէ ամենայնի

անձառելի խնամատարութեամբն իւրով։

Նա ինքն օրէնս կարգեաց տեսչութեան աշխարհի, և աքանչելապէս տնօրինեաց իւրաքանչիւր զկարգ իւր, և ամենայն բնութիւնք ունան կամաց նորա։

Ամենայն գիտութեան հատուէ նրբութեամբ մտաց իւրոց. և գաղտնիք հանդերձելոց մերկապատմաց կան առաջի նորա։

Ոչ թաքչին յաչաց նորա ծածուկք սրտի քո. Ճանաչէ ըստ կամս քո՝ մինչև քո խորհեցեալ ինչ ելցէ։

Ոչ ինչ ոչ վրիպի 'ի նախատրամտութենէ նորա, և չէ ինչ որ ըստ պատեհի գործելցի առաջի նորա։

Զարմանալի է յամենայն գործս իւր անքննին խորհրդովք. և 'ի վերայ է քան զմիտս զօրութիւն ի մտատարութեան նորա։

Վասն այնորիկ տուր փառս և պատիւ գերահրաշ հանճարոյ նորա, և անեղկիմիս հնարանգութեամբ խոնարհեցս զանձն քո

ընդ առաջնորդութեամբ ձեռին նորա։

Առատապարգև և մարդասէր է Տէր. հաստատեաց զաշխարհ սիրով և ողորմութեամբ։

Յայտնի են յամենայն 'ի գործս նորա կամք նորա բարեսէրք. աղբիւր է անհասութեան և լրումն կատարելութեան։

Գործք ձեռաց նորին պատմեն զշնորհս նորա, գովեն և փառաւորեն զնա 'ի վայելս իւրեանց. նա զարդարէ գեղով զատեղծուածս իւր, կազդուրէ սննդեամբ, բերկրութեամբ դարման տանի և զօրացուցանէ զնոսա, և պաշտպանէ նոցին յազգէ մինչև յազգ։

Եթէ զաչս 'ի վեր ընդ երկինս համբառնայցեմք, պայծառութիւն փառաց նորա լինիմք նկատողք. և եթէ 'ի խոնարհ յերկիր ակնարկեցեմք, ահա բարեօք նորա լցեալ են ծագք երկրի. բլուրք և հովիտք ցնծութեամբ երգեն նմա երգս. գեղք և անտառք և անդաստանք զփառս նորա քարոզեն։

Բայց զքեզ, ով մարդ, նախա-
պատիւ նախամեծար արար Տէր,
և դեր 'ի վերոյ ամենայն արարա-
ծոց իւրոց կացցոյց զպատման վի-
ճակի քո։

Զարդարեաց բանիւ զքեզ՝ առ
անկորուստ պահելոյ զնշխանա-
կան պերճութիւնդ քո. խօսուն
յարդարեաց զքեզ, որպէս զի
ընկերութեամբ բարպաւաճ լի-
ցիս. խնայական զօրութեամբ
վերացոյց զմիտս քո, զի անձնաւե-
լի շնորհաց իւրոց քննող և տեսող
կացցես։

Եւ զօրէնս զոր սահմանեաց
քեզ 'ի կանոն կենաց՝ բարեխնամ
կամօքն դիւրատարս արար բնա-
ւորական յօժարութեանց անձին
քում, որպէս զի և 'ի հպատակ-
կել անդ քո՝ երջանկութեան ան-
ձինդ գացես պատճառս։

Եւ արդ մի լուեր 'ի փառս
տալոյ շնորհաց և ողորմութեան
նորա, և մի դադարեր յերգոց
գոհութեան. խորհեալց լուս-
թեամբ 'ի աքանչելիս սիրոյ և գը-

թութեանց նորա. բղխեսցէ սիրա
քո բանս շնորհապարտ գոհու-
թեանց. պատմեսցեն շրթունք քո
զփառս և զպատիւ նորա. և ա-
մենայն գործք կենաց քոց յայտ-
նի արասցեն եթէ փառաւոր սի-
րով պահել զպատուիրանս նո-
րա։

Բարի և արդար է Տէր, և դա-
տելոց է զաշխարհ ուղղութեամբ
և արդարութեամբ։

Քանզի որ հաստատեացն օրէնս
'ի բարութեան և 'ի գթութեան,
վայելէ նմա և համարս պահան-
ջել 'ի ստուգանողացն։

Մի կարծիցես յաւակնեալդ
յանդգնութեամբ, եթէ պակա-
սեալ ինչ զօրութիւն բազկի
Տեառն՝ յերկայնամտել նորա 'ի
խնդրել զամբարշտութեանց քոց
զվրէժ. և մի խաբեր զանձն քո 'ի
յոյս մնոտի, որպէս թէ զանց
արասցէ զքեզ Տէր։

Քանզի աչք նորա քննեն ըզ-
սիրտս և զերիկամունս մարդկան,
և ոչ է մոռացութիւն առ նմա.

և ոչ առնու ակն Տէր մեծութեան հասակի և պատուոյ, և փառաց և աւագութեան։

Այլ առ հասարակ անձն քաջատոհմին և անտոհմի, մեծատան և անանկի, իմաստնոյն և ոգեւոր, 'ի Թովթափել հոգւոյ ըղձանրակիր շղթայս մահկանացու կենցաղոյս ըստ ակնարկել կամաց Տն՝ ժառանգեսցէ վարձս արդարս և մշանջենաւորս, զիսոխարէնս գործոց իւրոց։

Եւ խառնեսցին յայնժամ ժողովք ամպարշաց յահէ անոր նորա։ Այլ ոգի արդարոյն խնդութեամբ մտանէ և էլանէ 'ի դատաստանէ։

Վասն այնորիկ յերկիւղ Տեառն խոկասջիր զամենայն աւուրս կենաց քոց, և 'ի Հանապարհաց նորա մի հեռի առնիր. անսա՛ ազգմանց զգօնութեան, և ժուժկալութեամբ 'ի չափու կալ զանձն քո. արդարութի առաջնորդեսցէ ձեռաց քոց, և գութք ջերուսցեն զսիրտ քո։ Եւ դլուխ ամե-

նայնի, խոնարհ անկածութեամբ վառեա զհոգի քո առաջի Տեառն՝ 'ի գործս բարեպաշտութեան։

Սովինեք զգուշացեալ գնասցես 'ի շաբխոյս երջանկութեան 'ի կեանս քո, և յետ ասուեացս ժամանեսցես յանխոտրեալի կայս անանց և անսխրական երանութեանցն յաղթայութիւն Տեառն։

Ամդ եղեցի վախճան Ճշմարիտ անսուտութեան մարդկային կենաց։

ՑԱՆԿ

ՊԱՏՃԷՆ ԹՂԹՈՑ ԱՆԳԼԻԱՑԻՈՑ
ԹԱՐԳՄԱՆՉԻՆ . . . . Ա
ՆԱԽԵՐԳԱՆ 1
ՊՐԱԿ Ա. ՊԱՐՏՔ ՄԱՐԴՈՑ Ա-
ՌԱՆՁԻՆ . . . . . .
Ա. Խելամտութիւն . . . 5
Բ. Ճախաւորութիւն . . 7
Գ. Գործասիրութիւն . . 9
Դ. Նախանձաւորութիւն . 13
Ե. Խոհականութիւն . . 16
Զ. Արիութիւն 20
Է. Բաւականութիւն . . 22
Ը. Ժուժկալութիւն . . 25
ՊՐԱԿ Բ. ԿԻՐՔ . . . . .
Ա. Յոյս և երկիւղ . . . 32
Բ. Ուրախութիւն և տըրտ-
մութիւն 34
Գ. Բարկութիւն 38
Դ. Գթութիւն 42
Ե. Սէր և ցանկութիւն . . 44

ՊՐԱԿ Գ. ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳԱԿԱՆՔ
Ա. Կին 46
Բ. Կանամբի 51
Գ. Հայր 54
Դ. Որդի 56
Ե. Եղբայր 58
ՊՐԱԿ Դ. ՊԱՅՄԱՆՔ ԿԵՆԱՑ .
Ա. Իմաստուն և տգէտ . . 60
Բ. Մեծատուն և տնանկ . 63
Գ. Տէր և ծառայ . . . 67
Դ. Իշխանք և իշխեցեալք . 69
ՊՐԱԿ Ե. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՊԱՐՏՔ
Ա. Բարեսիրութիւն . . 74
Բ. Արդարութիւն . . . 76
Գ. Ողորմածութիւն . . 79
Դ. Երախտագիտութիւն . 81
Ե. Անկեղծութիւն . . . 83
ՊՐԱԿ Զ. ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԻՒՆ 87

00L5369

2001 2013

<< Ազգային գրադարան

NL0015369